ԼՈՒՍ ԶՈՒՂԱ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԺԳ ՏԱՐԻ ԹԻՒ 116 ՍԵՊՏԵՄԲԵՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ 2016

ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ

ԳԵՐՊ. Տ. ՍՈՒԱՆ Ծ. ՎՐԴ. ՔԷՉԷՃԵԱՆ

¶ºð² ä ² î Æô î¾ð êÆö²Ü Ì ²Úð²¶àÚÜ ì ²ð¸ ² ä º î ø¾ â¾Ö º²ÜÆ ÜÞ ²Ü²ÎàôØÜ Æ´ðºô êä ²Ð²ÜÆ Ð²Úà ò Âº ØÆ Î²ÂàÔÆÎàê²Î²Ü öàÊ²Üàð¸

Երեքշաբթի՝ 2016 թւականի սեպտեմբերի 20-ին, Սպահանի հայոց թեմ ժամանեց գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը, ով Մեծի տանն Կիլիկիոյ արժանընտիր գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսի կարգադրութեամբ նշանակւել է իբրեւ Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ:

Գերպ. Հայր Սուրբը ծնւել է 1975 թւականին, Լիբանանի մայրաքաղաք՝ Բէյրութում: 1989-ից կրթութիւնը շարունակել է Բիքֆայայում գտնւող Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Դպրեվանքում եւ աւարտելով այնտեղի ժառանգաւորաց բաժինը՝ 1993 թւականին ձեռնադրւել է որպէս սարկաւագ: Ապա հետեւելով Դպրեվանքի ընծայարանի դասընթացներին, 1997-ին ձեռնադրւել է կուսակրօն քահանայ՝ վերակոչւելով Տ. Սիփան աբեղայ:

Շուրջ երեք տարի՝ մինչեւ 2000 թւականը, Դպրեվանքում գործունէութիւն է ծաւալել որպէս տեսչութեան կազմի անդամ, սաների վերահսկիչ եւ միեւնոյն ժամանակ ուսուցիչ: Այնուհետեւ փոխադրւելով Անթիլիաս՝Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի թելադրանքով ստանձնել է կաթողիկոսարանի Մայր տաճարի լուսարարապետութեան (եկեղեցու պատասխանատու) պաշտօնը: Վարդապետութեան աստիճանն ստացել է 2002 թւականին, իսկ երեք տարի յետոյ Վեհափառ Հայրապետի միջոցով նրան շնորհւեց լանջախաչ կրելու իրաւասութիւն:

2005-ին, դարձեալ վերադարձել է Բիքֆայա՝ վարելով Դպրեվանքի փոխտեսչութեան պաշտօնը, որից յետոյ՝ 2007 թւականին մեկնել է Կանադա, ուր մէկ տարի զուգահեռաբար կատարել է Տորոնտոյի հոգեւոր հովւի օգնականի եւ Սանթ Քաթրինզ քաղաքի հոգեւոր հովւի պարտականութիւնները: 2008-ի դեկտեմբերին մեկնել է Սիրիա՝ Բերիոյ թեմ եւ սոյն թեմին ենթակայ Ջեզիրէի շրջանում -որի կենտրոնը Ղամիշլի քաղաքն է- վարել է առաջնորդի փոխանորդի պաշտօնը, մինչեւ 2014 թւականը: Ծայրագոյն վարդապետութեան աստիճանն ստացել է 2012 թւականին, երբ դեռ պաշտօնավարում էր Ղամիշլիում:

Այնուհետեւ Ղամիշլիից վերադարձել է Անթիլիաս եւ դարձեալ զբաղւել Մայր եկեղեցու լուսարարապետութեամբ, մինչեւ 2016 թւականի կէսերը, երբ Ն.Ս. Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի տնօրինումով նշանակւեց որպէս Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ:

Գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանին եւ թեմի ազգային մարմիններին միմեանց ծանօթացնելու նպատակով, թեմի Պատգամաւորական ժողովի դիւանի հրաւէրով, գերպ. Հայր Սուրբի ժամանման օրը, երեկոյեան ժամը 7:00-ին, ազգային առաջնորդարանի Ծաղկեայ դահլիճում կայացաւ հանդիպում՝ մասնակցութեամբ պատգամաւորների, Կրօնական եւ Թեմական խորհուրդների ու Հաշւեքննիչ մարմնի անդամների, պատգամաւորական Ժողովին մասնակցող խորհրդակցական ձայնով հրաւիրեալների, նաեւ շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցչի:

Հանդիպումն սկիզբ առաւ Հայր Սուրբի գլխաւորութեամբ միասնական աղօթքով, ապա Պատգամաւորական ժողովի դիւանի ատենապետ պրն. Վարուժ Մինասեանը ներկայացնելով գերպ. Հայր Սուրբին, Թեմի ազգային իշխանութեան անունից բարիգալստեան խօսք ու յաջողութեան մաղթանքներ ուղղեց նրան: Հանդիպման շարունակութեան մէջ նոյնպէս բարի մաղթանքներով եւ Թեմի ազգային դրւածքն ու հաստատութիւններն առաւել ծանօթացնելու բացատրութիւններով առանձնաբար ելոյթ ունեցան Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետեր՝ պրնյք. Վրէժ Տէր-Մարտիրոսեանն ու Վարուժ Մովսիսեանը, շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ պրն. Աշոտ Դաւթեանը, թեմի Հաշւեքննիչ մարմնի ատենապետ պրն. Մկրտիչ Աւետումեանը եւ Շահինշահիր հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը:

Այնուհետեւ արտայայտւեց գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը, ով հակիրճ ներկայացնելով իր կենսագրական գծերը եւ ծաւալած գործունէութիւնը, շնորհակալութիւն յայտնեց հնչած բոլոր մաղթանքների եւ ցուցաբերած վստահութեան համար, ապա կարեւորութեամբ շեշտելով, որ աշխատանքներն արդիւնաւէտ են դառնալու՝ հոգեւոր առաջնորդ-ազգային մարմիններ փոխադարձ համագործակցութեամբ եւ վստահութեամբ, իր ուրախութիւնը յայտնեց՝ թեմում կազմակերպւած ազգային կառոյցներ եւ յատկապէս իմաստուն ու աշխատասէր հոգեւոր հայրեր եւ ազգայիններ ունենալու կապակցութեամբ:

Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔԻ «Ս. ՅՈՎՍԷՓ ԱՐԵՄԱԹԱՑԻ» ԵԿԵՂԵՑՈՒ ՄՆԻՄՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

Երկուշաբթի՝ հոկտեմբերի 18-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանքում համախմբուել էին հայորդիներ՝ տօնելու Ս.Ա. Վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» մայր եկեղեցու անուանակոչութեան տօնը, որը նշուած է իբրեւ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանքի տօն:

Յետմիջօրէի ժամը 5:30-ին, սուրբ եւ անմահ Պատարագ մատուցուեց Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանի ձեռամբ: Արարողութեանը մասնակցում էին հոգեւորականաց եւ դպրաց դասերը, իսկ Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Ս.Ա. վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ խմբավար Արմէն Ամիրխանեանի ղեկավարութեամբ: Հոգեպարար արարողութեանը եւ յաջորդող գեղարուեստական յայտագրով ծրագրին ներկայ էին բազմաթիւ հաւատացեալներ:

Ս. Պատարագի ընթացքում՝ քարոզի պահին, պատարագիչ Հայր Սուրբը ներկայացնելով Աւետարանի մէջ Յովսէփ Արեմաթացու միջոցով Պիղատոսին կատարած դիմումի եւ Յիսուսի մարմինը խաչից իջեցնելու դրւագը, անդրադարձաւ Յովսէփ Արեմաթացու առաքինութիւններին եւ յատկապէս նրա պարտականութեան գիտակցութեանը, ով քաջութիւն ունեցաւ Յիսուսին հաւատարիմ մնալ Նրա մահից յետոյ, նոյնիսկ այն պայմաններում, երբ առաքեալներն անգամ լքել էին Աստուածորդուն: Գերպ. Հայր Սուրբը դրւատելով Ս. Յովսէփ Արեմաթացու արարքը, այսօրւայ դրութեամբ եւս անհրաժեշտութիւն նկատեց պարտաճանաչութեամբ աշխատելը, եւ յորդորեց հաւատացեալներին՝ ինքնաքննութեամբ եւ ինքնասրբագրութեամբ սուրբին օրինակ դարձնեն իրենց կեանքում եւ պարտաճանաչութիւնն ու պարտականութեան գիտակցութիւնը դրսեւորեն երկու ուղղութեամբ՝ նախ Աստծու եւ ապա մեր նմանների նկատմամբ՝ սրբակեաց, բարեպաշտ ու աստուածահաճոյ կենցաղով եւ մանաւանդ բարեգործութեամբ ու մարդասիրութեամբ՝ արժանանալու համար Աստծու գթութեանն ու ողորմութեանը:

Ս. եւ անմահ Պատարագի աւարտին, Ս. Խորան բարձրացան հոգեւորականաց ու դպրաց դասերը, եւ պատարագիչ Հայր Սուրբի ձեռամբ Ս. Յովսէփ Արեմաթացու աջով Ջրօրհնէք կատարուեց. օրհնւած ջուրը բաժանուեց ներկայ հաւատացեալներին՝ իբրեւ հաւատի ամրացման, հիւանդաց առողջութեան եւ ցաւերի փարատման միջոց:

Այնուհետեւ վանքի բակում, եկեղեցու արեւմտեան մասում, հոգեհանգստեան կարգ կատարուեց Ս. Ամենափրկչեան

Վանքում պաշտօնավարած ննջեցեալ հոգեւորական ու աշխարհական բոլոր սպասաւորների եւ եկեղեցու բարերարների հոգիների խաղաղութեան համար:

Եկեղեցական արարողութիւնից յետոյ, Վանքի բակում, հոգեւորականաց դասի, Իսլ. խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ժորժ Աբրահամեանի, ազգային մարմինների եւ Նոր Ջուղայի ու Շահինշահիրի համայնքների անդամների ներկայութեամբ տեղի ունեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագրով ծրագիր՝ բաղկացած համայնքի երգչախմբերի, պարախմբերի, ասմունքի խմբերի եւ անհատ երգիչների միջոցով կատարուող ազգային-ժողովրդական երգերից, արտասանութիւններից ու պարերից:

Իրենց գեղեցիկ կատարումներով հանդէս եկան Հայ ուս. Զհարմահալ միութեան «Մեղեդի» մանկական երգչախումբը՝ «Անուշ խաղող» եւ «Երկիր հարազատ» խմբերգերով՝ խմբավար Համիկ Ալեքսանդրեանի գեղարուեստական ղեկավարութեամբ եւ Արսինէ Մարգարեանի ուսուցմամբ, Փերիոյ կրթ. միութեան «Էրեբունի» պարախումբը՝ «Տաւիղ» եւ «Նազ պար» պարերով՝ ղեկավարութեամբ պարուսոյց Ալինա Գրիգորեանի, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան մշակութային միաւորի «Կռունկ» պարախումբը՝ «Կապոյտ թռչուն» եւ «Էրզրումի շորոր» պարերով՝ ղեկավարութեամբ պարուսոյց Նունէ Մկրտչեանի, Ռիմա Սիմոնեանի ղեկավարութեամբ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան մշակութային միաւորի «Կռունկ» ասմունքի խմբի անդամ Ալինա Ալեքսանդրեանը՝ «Սփիւռքահայեր» արտասանութեամբ, Ն.Ջ. Հայուհեաց բարեգործական ընկերութեան «Փարոս» ասմունքի խմբի անդամ Վանէ Շահնազարեանը՝ Զարենցի տաղարանի մի հատուածի արտասանութեամբ: Մենեերգեցին Այլին Քեշիշեանը՝ աշուղ Լէյլիի «Ով բախտ անարդար» եւ Հարմա Կարապետեանը՝ «Ախպէրս ու ես», Շահինշահիրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը՝ «Քամիները տանում են» երգերը, ապա Ս. Ամենափրկչեան վանքի «Տաթեւ» երգչախումբը՝ խմբավարութեամբ Համիկ Ալեքսանդրեանի՝ «Վերէն ի վար», «Ճախրայ մանող» եւ «Նոր Ջուղա» խմբերգերի կատարումներով եզրափակեց գեղարուեստական ծրագիրը:

Ծրագրի հաղորդավարութիւնը կատարեց Վեհանուշ Խուդաբախշեանը, ով գեղարուեստական կատարումների ընթացքում, մէջընդմէջ համապարփակ կերպով ներկայացրեց Ս.Ա. Վանքի եւ «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցու կառուցման հանգամանքները, եւ վերջում Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի ու կազմակերպիչ յանձնախմբի անունից շնորհակալութիւն յայտնեց բոլոր այն կազմերին ու անհատներին, ովքեր համագործակցել էին ծրագիրն իրականացնելու համար:

Հանդիսութեան եզրափակումն եղաւ կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանի խօսքը:

Գերպ. Հայր Սուրբը գնահատանքի եւ շնորհակալութեան խօսքեր ասաց կազմակերպիչներին ու մասնակիցներին, եւ «Անուշ խաղող» երգի բառերը փոխ առնելով՝ շեշտեց, որ Նոր Ջուղան՝ նման խաղողի որթատունկի՝ հայրենիքից սնուած, աւիւն ու աւիշ ստացած այն համայնքն է, որը դարերի ընթացքում իր փայլքը արժանի կերպով ցոլարձակել է իր շուրջ: Վերջում նա բոլորին շնորհաւորեց տօնի կապակցութեամբ:

Ջեռնարկի աւարտին տօնի կազմակերպիչ յանձնախմբի միջոցով տեղի ունեցաւ համեստ հիւրասիրութիւն:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՅՑԸ Ս. ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՎԱՆՔ

Հինգշաբթի՝ 2016 թւականի սեպտեմբերի 8-ի առաւօտեան ժամը 11:00-ին Ս. Ամենափրկչեան վանք այցելեց Ֆրանսիայի ազգային խորհրդարանի նախագահ՝ Կլաուդ Բարտելոնը, ում ընկերակցում էին Իրան-Ֆրանսիա ընկերութեան խորհրդարանական խմբակի ատենապետը, Ֆրանսիայի խորհրդարանի արտաքին յարաբերութիւնների խորհրդի փոխ-ատենապետը, Ֆրանսիայի խորհրդարանի պաշտպանութեան-ազգային խորհրդի անդամներից եւ խորհրդարանական այլ անձերից բաղկացած պատուիրակութիւն:

Հիւրերին դիմաւորեցին գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը, Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի դիւանի, Թեմական եւ կրօնական խորհուրդների ատենապետերն ու անդամները:

Սկզբում պատուիրակութիւնն այցելեց Հայոց Ցեղասպանութեան Ս. նահատակների յիշատակին կանգնեցուած յուշարձան, ապա «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի եւ «Խաչատուր Կեսարացի»-ի անուան թանգարան, որտեղ կառոյցի մասին ընդհանուր բացատրութիւններ տրուեցին գերպ. Հայր Սուրբի եւ Սպահանի նահանգապետարանի հիւրընկալման բաժնի պատասխանատու պրն. Նիքայինի միջոցով: Պրն. Բարտելոնն իր տպաւորութիւններն արձանագրեց թանգարանի յուշատետրում:

Պատուիրակութիւնը հիւրընկալուեց Ազգային առաջնորդարանի Ծաղկեայ դահլիճում, որտեղ գերպ. Հայր Սուրբը Ազգային իշխանութեան անունից ողջունեց եւ բարի գալուստ մաղթեց պրն. Բարտելոնին եւ ընդհա-

նուր ու համապարփակ տեղեկութիւն փոխանցեց յարգելի հիւրերին Սպահանի հայոց թեմի կացութեան եւ հայ համայնքի հնարաւորութիւնների ու կառավարութեան կողմից վայելած յարգանքի եւ նիւթա-բարոյական հովանաւորութեան մասին:

Գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը յատուկ շնորհակալական խօսք ուղղեց Ֆրանսիայի կառավարութեանը՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ դրա ժխտողականութեան դէմ քրէական օրէնք սահմանելու յատակ դիրքորոշում որդեգրելու համար:

Պրն. Կլաուդ Բարտելոնն իր հերթին շնորհակալութիւն յայտնեց ջերմ ընդունելութեան համար եւ Ազգային առաջնորդարանի զանազան բաժիններ այցելելու կապակցութեամբ իր տպաւորութիւնների մասին խօսեց: Նշելով, որ Ֆրանսիան միշտ արդարութեան պաշտպանն ու կողմնակիցն է եղել, պրն. Բարտելոնը շեշտեց, որ իր երկիրը Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ եւս նոյն վճռակամութեամբ է լցած:

Յաջորդիւ ողջոյնի խօսք ասաց Թեմական խորհրդի ատենապետ պրն. Վրէժ Տէր-Մարտիրոսեանը, վստահեցելով, որ Սպահանն իր բազմակրօն եւ համերաշխ մթնոլորտով գեղեցիկ յուշեր է արձանագրելու պատիրակութեան անդամների մտքում:

Հանդիպումն աւարտուեց Ազգային իշխանութեան կողմից յուշանուէր յանձնելով Ֆրանսիայի ազգային խորհրդարանի նախագահին:

ԱՐԽԱՐԱՀԱՍՓԻՒՌ ՀԱՅԱԼԵԶՈՒ ՄԱՄՈՒԼԻ ՅԱՅՏՆԻ ԴԷՄՔԵՐԻ ԱՅՑԸ ՀԻՆԱՒՈՒՐՑ ՆՈՐ ՋՈՒՂԱ

«Ալիք» օրաթերթի 85-ամեակի առթիւ Իրան ժամանած հայաշխարհի զանգուածային լրատուամիջոցների խմբագիրներն ու լրագրողները, ուղեկցութեամբ յոբելեար օրաթերթի գլխաւոր խմբագիր Դերենիկ Մելիքեանի եւ ներկայացուցիչների, կիրակի՝ սեպտեմբերի 18-ի երեկոյեան, այցելեցին Նոր Ջուղա:

Այցի շրջագծում պատուիրակութիւնն սկզբում եղաւ առաջնորդանիստ Ս. Ամենափրկչեան վանքում, ուր նրանց ջերմօրէն դիմաւորեցին Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը, Իրանի Իսլ. Խորհրդարանում հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ժորժիկ Աբրահամեանը եւ թեմի ազգային մարմինների, Հայ Դատի յանձնախմբի, միութիւնների ու դպրոցների ներկայացուցիչները:

Այնուհետեւ ներկաներն իրենց յարգանքի տուրքը մատուցեցին Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակին՝ վանքի շրջափակում գտնուող յուշարձանին ծաղիկներ մատուցելով, ապա այցելեցին առաջնորդարանի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցի եւ «Խաչատուր վրդ. Կեսարացի» թանգարան:

Յաջորդիւ «Ծաղկեայ դահլիճ»-ում հանդիպում կայացաւ հիւրերի եւ հիւրընկալի միջեւ, որտեղ ողջոյնի եւ բարիգալստեան մաղթանքներով, ինչու չէ նաեւ աւանդական թեմն աւելի ճանաչեցնելու նպատակով, առանձնաբար արտայայտուեցին գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը, Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի ատենապետ Վրէժ Տէր-Մարտիրոսեանը, պատգամաւոր Ժորժիկ Աբրահամեանը եւ շրջանի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչ Աշոտ Դաւթեանը: Վերջում արտայայտուեց «Ալիք»-ի գլխաւոր խմբագիր Դերենիկ Մելիքեանը՝ առաւել ծանօթացնելով պատուիրակութեան անդամներին: Աւարտին կազմակերպուած ընդունելութեան ընթացքում ներկաներն առիթ ունեցան մտերմիկ զրոյց ունենալ միմեանց հետ:

Շարունակութեան մէջ խումբն ազգայինների ուղեկցութեամբ այցելեց հայոց ազգային դպրոցներ, ապա Հայ Դատի յանձնախմբի կենտրոնատեղի, որից յետոյ բոլորը հիւրընկալուեցին Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան յարկի ներքոյ՝ մասնակցելով թեմի ազգային իշխանութեան կողմից կազմակերպուած ընթրիք-երեկոյին: Վերջում ազգային մարմինների անունից յուշանուէրներ յանձնուեցին հայաշխարհի մամլոյ ներկայացուցիչներին:

Ծրագրի համաձայն երկուշաբթի՝ սեպտեմբերի 19-ի առաւօտեան այցելութիւնների շարանը շարունակուեց Սպահան քաղաքի տեսարժան վայրերում շրջագայութիւններով, որից յետոյ կէսօրին պատուիրակութիւնը վերադարձաւ Թեհրան:

ՀՀ ՎԵՐԱՆԿԱԽԱՅՄԱՆ 25-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի նախաձեռնութեամբ, ազատատենչ հայ ժողովրդի միասնական կամքի դրսեւորման տօնը՝ 1991 թւականի սեպտեմբերի 21-ին, անկախութեան հանրաքւէին միահամուռ կերպով «այո» ասելու պանծալի առիթի 25-ամեակը նշուեց, չորեքշաբթի՝ սեպտեմբերի 28-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան մարզասրահում:

Տօնակատարութեանը ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը, քահանայից դասը, օրւայ բանախօս Հայաստանից ժամանած ազգային-հասարակական գործիչ եւ պատմաբան Արտակ Սարգսեանը, թեմի ազգային մարմինների եւ Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչներն ու ժողովուրդ:

Սկզբում ներկաների յոտնկայս ունկնդրութեամբ հնչեց Իրանի Իսլամական եւ Հայաստանի Հանրապետութիւնների օրհներգերը, ապա հանդիսավարուհի Սօսէ Ասատրեանը երեկոյի բացման խօսքում անկախութիւնը ազգի յարատեւման, զարգացման, բարգաւաճման եւ արժանապատիւ ապրելու առաջին գրաւականը համարելով, ասաց. «*Այժմ Հայաստանի Հանրապետութիւնը կայացած եւ անկախ պետութիւն է ու սեպտեմբերի 21-ը իւրաքանչիւր հայի հոգում ու մտքում ամրագրւած է որպէս մի գեղեցիկ տօն, որը վերստին արժեւորում է անկախութեան գաղափարը՝ բլորին համակելով հայրենիքն անմնացորդ սիրելու, զարգացնելու ու պահպանելու եռանդով*»:

Յաջորդիւ Թեմական խորհրդի խօսքը փոխանցեց ատենապետ Վրէժ Տէր-Մարտիրոսեանը, ուր նշելով, որ 25-ամեայ վերանկախութեան ժամանակաշրջանում ձեռքբերւած յաղթանակները կայացել են Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութեան շնորհիւ, կարեւորութեամբ շեշտեց, թէ նոյն միասնութեամբ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի շրջագծում իրականացաւ Հայ Դատի ճանաչման ուղղութեամբ յաջողութիւնները եւ ապրիլեան օրերին Ադրբեջանի սանձազերծ նկրտումների դէմ հայրենիքի պաշտպանումը. Նա աւելացրեց, որ Հայաստանի անկախութիւնը պէտք է նշանաւորւի նաեւ տնտեսական զարգացմամբ, հասարակական ու քաղաքական կեանքի աշխուժացմամբ, Հայաստանի իւրաքանչիւր քաղաքացու բարեկեցութեամբ եւ լիարժէք ազատութեամբ, որի ուղղութեամբ եւս շատ են մեր անելիքները:

Այնուհետեւ ընթերցւեց Իրանում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Արտաշէս Թումանեանի ուղերձը, որից մի հատւած մէջբերում ենք.

«*Այսօր էլ մեր զինւորներն ու սպաները եւ ողջ ժողովուրդը պատրաստ են դիմակայել մեր պետութեան դէմ կատարւող ցանկացած ոտնձգութեանը. մի բան, որ հերթական անգամ ապացուցւեց այս տարւայ ապրիլին, մեր հարեւան երկրի կողմից հրահրւած քառօրեայ պատերազմի ընթացքում: Ինչ վերաբերում է Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորմանը, մեր պետութիւնը խաղաղ կարգաւորումից այլընտրանք չի տեսնում: Մեզ համար չափազանց կարեւոր է հարեւան երկրների հետ արդիւնաւէտ յարաբերութիւններ հաստատելը: Իրանն այդ տեսանկիւնից Հայաստանի կարեւորագոյն գործընկերներից է. Հայաստանի լաւագոյն բարեկամներից մէկը: Հայաստան-Իրան յարաբերութիւնները եղել են եւ մնում են մեր արտաքին յարաբերութիւնների կարեւորագոյն ուղղութիւններից մէկը*»:

Յաջորդիւ հանդիսավարուհին ներկայացնելով բանախօսին՝ նրան հրաւիրեց օրւայ առթիւ իր ելոյթն ունենալու: Արտակ Սարգսեանն իր խօսքում հայութեան

առջեւ ծառացած հրամայականներն ընդգծեց, որոնցից էին՝ արդար հասարակութեան կերտումը, պետական արդիւնաւէտ համակարգի ստեղծումը, օլիգարխիկ տնտեսութեան վերացումը, Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւնների միջեւ ռազմա-քաղաքական դաշինքի կնքման եւ Արցախի անկախութեան միջազգային ճանաչման գործընթացներին հետամուտ լինելը, հայոց բանակի եւ ռազմական ամբողջ համակարգի արդիականացման ու Հայ Դատի արդարացի լուծման ուղղութեամբ պայքարի շարունակումը եւ...

Բանախօսն իր խօսքում նշելով, որ Ադերբեջանը չի կարող ռազմական ճանապարհով լուծել Արցախի հարցը, հայոց մարտունակ բանակն ի վիճակի է պաշտպանելու Հայաստանի եւ Արցախի անկախութիւնը եւ Հայաստանը, Արցախն ու Սփիւռքը միասնական ու վճռական են՝ հայութեանը սպառնացող վտանգները չէզոքացնելու հարցում, շեշտեց. «*Քաղաքական համակարգի առողջացման թիւ մէկ պայմանը արդար ընտրութիւններն են, որի առաջին դրական հիմքերն այսօր առկայ են... Ոստիկանական գնդի գրաւման յուլիսեան դէպքերը եկան մի անգամ եւս փաստելու, որ Հայաստանում գոյութիւն ունեն բազմաթիւ խնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն եւ երկրում առկայ է դժգոհութեան մեծ ալիք, որը կարող է ստանալ նաեւ անկանխատեսելի դրսեւորումներ՝ մեծ հարւած հասցնելով հայոց պետականութեանն ու միջազգային հեղինակութեանը։ Ակնյայտ է, որ փոփոխութիւնները պէտք է ընթանան, ոչ թէ բաժանարար գծերը խորացնելու եւ ներքաղաքական խնդիրները սուր առճակատումներով լուծելու, այլ երկխօսութիւնն առաւել կառուցողական դարձնելու եւ նոր կամուրջներ կառուցելու ուղիով*»։

Ընթացքում ներկաներին իր հայրական պատգամը փոխանցեց թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը, ով սկզբում փառապանծ տօնն արժանավայել նշելու համար՝ գնահատանքի խօսք ուղղեց Թեմական խորհրդին, օրուայ բանախօսին եւ տօնակատարութեան կազմակերպման գործում բոլոր անհատներին: Նա նշեց, որ ճիշտ է հայրենիքը մեր ուզած ուժգնութեամբ եւ պահանջած արագութեամբ չի բարձրանում, սակայն պէտք է գիտակցենք, որ հայրենիքը ոչ յետքայլի մէջ է եւ ոչ էլ տեղքայլի. հայրենիքը վերելքի ընթացքի մէջ է:

Հայր Սուրբն իր խօսքի շարունակութեան մէջ աղօթեց առ բարձրեալն Աստուած, որ դեռ երկար տարիներ հայրենիքի անկախութեան ամեակները տօնախմբուեն, այսուհետ մայր հայրենիքում արտագաղթի փոխարէն բացւեն ներգաղթի դռները, ժողովրդի քանակը աճ արձանագրի եւ ունենանք առաւել առողջ հասարակութիւն, հաւատարիմ ժողովուրդ, հզօր հանրապետութիւն ու գերհզօր հայկական բանակ:

Երեկոն առաւել տօնական դարձաւ գեղարուեստական կատարումներով յագեցած բաժիններով, որտեղ ներկաների խանդավառութեան բազմապատկման առիթ հանդիսացան Հայաստանից ժամանած սիրուած երգիչ Մհեր Մեսրոպեանը՝ իր աշխոյժ մեղեդիներով երգերի կատարմամբ եւ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան մշակութային միաւորի «Կռունկ» պարախումբը՝ իր պարային ելոյթներով: Պարախմբի գեղարուեստական ղեկավարն էր՝ պարուսոյց Նունէ Մկրտչեանը:

ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻ ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԾԵՐԱՆՈՑ

Շաբաթ՝ հոկտեմբերի 1-ի առաւօտեան ժամը 10:00-ին, Տարեցների միջազգային օրուայ առթիւ, Սպահանի հայոց թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը, ընկերակցութեամբ թեմի Կրօնական խորհրդի ատենապետ Վարուժ Մովսիսեանի, իր առաջին այցելութիւնը կատարեց Նոր Ջուղայի հայոց ազգ. ծերանոց:

Ծերանոցում հիւրերին ջերմ դիմաւորեցին սոյն կենտրոնը կառավարող Ն.Ջ. Հայ Կանանց Գթութեան միութեան վարչութիւնն ու Ծերանոցի յանձնախմբի անդամուհիները, ինչու չէ նաեւ այս հանգստի տան աշխատակազմն ու բնակիչները:

Այնուհետեւ ողջոյնի եւ բարի գալստեան խօսքով հանդէս եկաւ Կանանց Գթութեան միութեան վարչութեան նախագահուհի Արմինէ Սիմոնեանը, ով ներկայացրեց միութեան պատմական անցեալն ու գործունէութիւնը եւ ծերանոցի կառավարման ուղղութեամբ ծաւալուող հսկայական աշխատանքը:

Հայր Սուրբն իր ուրախութիւնը յայտնելով ծերանոց կատարած այցելութեան կապակցութեամբ եւ շնորհաւորանքներ փոխանցելով Տարեցների միջազգային օրուայ առթիւ՝ կարեւորեց տարեցների դերն ու նշանակութիւնը ընտանիքների համար: Նա, դիմելով ծերանոցում բնակւող տատիկներին, խնդրեց՝ որպէս մայրեր, աղօթել իրենց զաւակների եւ թոռների, ինչու չէ նաեւ իր համար, քանի որ Աստուածաշնչում շեշտուած է՝ մօր աղօթքը ամենաազդեցիկ եւ ամենազօրաւոր աղօթքներից է:

Խօսքերի աւարտին Հայր Սուրբը մտերմիկ զրոյց ունեցաւ բնակիչների հետ, որից յետոյ տարեցներին նուիրեց ծաղիկներ:

Առողջական խնդիրներ ունեցող տարեցներին եւս գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանն այցելեց իրենց կացարաններում եւ աղօթեց նրանց շուտափոյթ ապաքինման համար:

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՕՆԻ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՆՇՈՒՄԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒՄ

Շաբաթ՝ հոկտեմբերի 8-ի առաւօտեան, Սրբոց Թարգմանչաց տօնի առթիւ, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանի, ս. եւ անմահ Պատարագ մատուցեց Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցում: Օրուայ պատարագիչ եւ քարոզիչ հայրն էր Շահինշահրի հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը: Պատարագին մասնակցում էին թեմի քահանայից ու դպրաց դասերը եւ Ս.Ա. վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ շարականների երգեցողութեամբ:

Արարողութեանը ներկայ էին Իրանի Իսլ. Խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ժորժիկ Աբրահամեանը, ազգային մարմինների ներկայացուցիչները, թեմի հաւատացեալ ժողովուրդը եւ հայոց ազգային դպրոցների աշակերտութիւնը՝ ընկերակցութեամբ պատկան տեսչական եւ ուսուցչական կազմերի ու ծնողական խորհուրդների:

Գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանն իր քարոզում աշակերտներին յիշեցնելով, որ Թարգմանչաց տօնը իւրաքանչիւր հայ աշակերտի համար պէտք է լինի գիտակցելու եւ ուխտի վերանորոգման օր, յատկապէս անդրադարձաւ աղօթքի կարեւորութեանը եւ աւելացրեց, որ օրը պէտք է բացել ու փակել աղօթքով եւ մերօրեայ կեանքի զանազան հաճոյքների ու գրաւչութիւնների կողքին պէտք է միշտ յիշել Աստծուն եւ Աստուածաշունչը:

Նա իր խօսքի մի այլ բաժնում անդրադառնալով, որ մենք, մեր հայրապետներից որպէս ժառանգութիւն ստացել ենք հետեւեալ պատգամը՝ «*Սովորել, սիրել, յարգել ու աղօթել*» շեշտեց, թէ՝ «*Մեսրոպ Մաշտոցը մեզ աղօթել է սովորեցնում եւ սովորեցնում է, որ ամբողջ նեղութիւնները կարելի է աղօթքով յաղթահարել. աղօթքը հոգու եւ սրտի սնունդն է եւ առանց դրա չենք կարող մեր առօրեան լաւագոյն կերպով ապրել*»։ Գերպ. Հայր Սուրբն աւելացրեց նաեւ, որ Սահակ Պարթեւի ուսուցումների համաձայն պէտք է լինենք մեծ ու խոնարհ եւ դա կարող ենք իրագործել սիրելով ու ներելով, իսկ ամենասկզբում մեր հայրապետների աւանդը պահելու համար պէտք է հնազանդ լինենք մեր ուսուցիչներին:

Քարոզիչն իր պատգամի աւարտին հայ ուսուցչի տօնը շնորհաւորեց բոլոր կրթական մշակներին՝ ի մասնաւորի թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանին, ով երկար տարիներ որպէս ուսուցիչ ծառայել է Անթիլիասի Դպրեվանքում:

Հոգեպարար արարողութեանը յաջորդեց աշակերտական ծրագիրը, որը իրականացուեց Խաչատուր Վրդ. Կեսարացու անուամբ թանգարանի մուտքի առջեւ՝ Մեսրոպ Մաշտոցի եւ Խաչատուր վրդ. Կեսարացու կիսանդրիների մօտ: Այս բաժինն սկիզբ առաւ Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի գրասենեակի պատասխանատու Մադլէն Ղարիբեանի հաղորդավարութեամբ՝ տօների առթիւ շնորհաւորանքի ու օրւայ խորհրդի մասին խօսքերով:

Այնուհետեւ հերթաբար իրենց գեղարուեստական ծրագիրը ներկայացրին Նոր Ջուղայի հայոց ազգային դպրոցների աշակերտները: Ելոյթների մեկնարկը կատարեցին Հայոց ազգ. նախակրթարանի սաները՝ առիթին նուիրուած իրենց գեղեցիկ խօսքերով ու խմբական երգով: Ապա «Արմէն» երկսեռ կրթահամալիրի աշակերտներն արտայայտեցին հայոց լեզուի մասին մեր մեծերի դրուատանքի խօսքերից մի փունջ, այն համեմելով համահունչ ասմունքներով ու երգով: Որպէս աշակերտական կատարումների վերջաբան՝ ելոյթ ունեցան «Քանանեան» աղջկանց եւ «Կատարինեան» տղայոց

միջնակարգ դպրոցներից երկուական աշակերտներ: Կատարինեանցիների ներկայացուցչի միջոցով հնչեց մէկ ասմունք, իսկ Քանանեանը ներկայացնող աշակերտուհին ընթերցեց Վարդգէս Պետրոսեանի գրչին պատկանող մի հատուած՝ հայերէն գրականութեան նկատմամբ հայ ժողովրդի անընկարագրելի սիրոյ մասին, ապա միւս երկու աւագ աշակերտները, ընկերակցելով միմեանց, մէկ ասմունքով զարդարեցին բարեբաստիկ տօնը:

Յաջորդիւ արտայայտուեց խորհրդարանի պատգամաւոր Ժորժիկ Աբրահամեանը, ով գնահատանքի խօսք ուղղելով աշակերտական ելոյթների կապակցութեամբ, շեշտեց. «*Մշակոյթը միայն լեզուով չի սահմանափակւում, սակայն այն բիւրեղացւում է լեզուով ու այբուբենով եւ լեզուն մշակոյթի յարատեւման ու յաւերժացման միջոցն է*». պրն. Աբրահամեանն իր խօսքի շարունակութեան մէջ դրուատանքով արտայայտուեց Նոր Ջուղայի հարուստ մշակոյթի մասին եւ համայնքի անդամներին կոչ արեց՝ սովորութիւն չդարձնել տեղի մշակութային ժառանգութեանը եւ փորձել շարունակ զարմանալ դրանցով: Նա գոյատեւելու ու ապրելու մեծ ցանկութիւնն ու դրա իրագործման ճանապարհը՝ հայ ժողովրդի իրական մշակոյթը համարեց եւ շեշտեց՝ չարտագաղթել ու օրըստօրէ աւելի ծաղկուն դարձնել համայնքը:

Պատգամաւորի խօսքին յաջորդեց ամենաընթերցասէր աշակերտների գնահատման պահը, որտեղ սկզբում ներկայացուեցին եւ Կրթական խորհրդի կողմից պատրաստուած նուէրներով պարգեւատրուեցին դպրոցների գրադարանների ամենաընթերցասէր աշակերտները, ապա Ս. Ամենափրկչեան վանքի «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարանի գրադարանավարուհի Վերգինէ Միրզախանեանը նոյնպէս ներկայացրեց սո՛յն գրադարանի ընթերցասէր աշակերտ-անդամներին, ովքեր ինչպէս նախորդ խումբը պարգեւատրուեցին Հայր Սուրբի ձեռամբ՝ սոյն գրադարանի կողմից պատրաստուած նուէրներով:

Միջոցառումը եզրափակուեց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանի հայրական օրհնանքով:

Հայր Սուրբն սկզբում իր ուրախութեան խորը զգացումը յայտնեց, առ այն, որ թեմի զաւակները՝ ի մասնաւորի մատաղ սերունդը, լաւապէս տիրապետում են հայերէն լեզուին եւ Առաջնորդարանի թանգարանում ու մատենադարանում պահւում են հայկական գրականութիւնից եզակի նմուշներ, որոնք մեր ժողովրդին պատկանող գանձեր են: Այնուհետեւ նա գնահատելով ծնողներին՝ իրենց զաւակներին հայկական վարժարաններում ուսման տալու կապակցութեամբ, աւելացրեց. «*Սփիւռքի մէջ գտնուող հայկական վարժարանը հայ մշակոյթի զօրանոցն է։ Ձեր զաւակներն այս զօրանոցում դառնում են Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթեւի եւ յատկապէս հայ մշակոյթի ու լեզուի ոչ թէ աշակերտը, այլ նոր գինուորը*»: Գերպ. Հայր Սուրբը շնորհաւորանքներ փոխանցեց հայ մաշկոյթի եւ հայ ուսուցչի տօների կապակցութեամբ:

Վերջում ամենամեայ սովորութեան համաձայն, ծրագրի աւարտին, Ն.Ջ. Հայոց ազգային «Քանանեան» միջնակարգ դպրոցի աշակերտուհիները համախմբուեցին նոյն դպրոցի հիմնադիր բարերար Վարվառէ Քանանեանի շիրիմի շուրջ, որը գտնուում է Ս.Ա. վանքի շրջափակում եւ իրենց յարգանքի տուրքը մատուցեցին նրա անթառամ յիշատակին:

ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԳԵՐՊ. Տ. ՍԻՓԱՆ Ծ. ՎՐԴ. ՔԷՉԷՃԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՓԵՐԻՈՅ ՀՐՁԱՆԻ ԳԻՒՂԵՐ

Սպահանի հայոց թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը՝ թեմի ազգային մարմինների ներկայացուցիչների ընկերակցութեամբ, հինգշաբթի՝ հոկտեմբերի 27-ին, ճանաչողական այցով մեկնեց Սպահան նահանգի Փերիոյ գաւառ: Այս ծիրում գերպ. Հայր Սուրբն այցելեց Սնկերտ գիւղի Ս. Ստեփանոս, Բոլորան գիւղի Ս. Ղուկաս, Խոյգան գիւղի Ս. Աստուածածին եւ Ղարղուն գիւղի Ս. Նշան եկեղեցիներ ու մօտիկից ծանօթացաւ իւրաքանչիւր եկեղեցու վարչութեան կատարած աշխատանքներին՝ սրբավայրը բարեկարգ վիճակում պահելու ուղղութեամբ:

Գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանին նշած գիւղերում ջերմ դիմաւորեցին պատկան եկեղեցիների վարչութիւնների անդամները, ինչու չէ նաեւ տեղի հայ բնակիչները:

Պատուիրակութիւնն այցելեց նաեւ Նամակերտ գիւղի նախկին ազգային հիւանդանոց, որն այժմ ծառայում է որպէս զբօսաշրջիկների կացարան եւ ճամբարների կեցութեան վայր:

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՍՊԱՀԱՆԻ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Սպահանի հայոց թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը ընկերակցութեամբ Թեմական եւ Կրօնական խորհուրդների ատենապետերի՝ պրնյք. Վրէժ Տէր-Մարտիրոսեանի եւ Վարուժ Մովսիսեանի, երկուշաբթի՝ 2016 թւականի հոկտեմբերի 31-ի առաւօտեան ժամը 9:30-ին այցելեց Իսլամական մշակոյթի եւ առաջնորդութեան Սպահանի գերատեսչութեան գրասենեակ եւ տեսակցութիւն ունեցաւ տնօրէն այաթ. հոջ. դկտ. Հաբիբուզա Առզանիի հետ:

Հանդիպման նպատակը պետական պաշտօնեաների հետ ծանօթացումն էր, որտեղ գերպ. Հայր Սուրբը իր ողջոյնի խօսքը փոխանցեց յարգելի տնօրէնին եւ վստահեցրեց, որ ինչպէս անցեալում, այսուհետ եւս նոյն ոգով կը շարունակի գերատեսչութիւն-առաջնորդարան համագործակցութիւնը: Գերպ. Հայր Սուրբը շեշտեց, որ արդէն հասցրել է տեղեկանալու Սպահանի գերատեսչութեան ցուցաբերած լայն համագործակցութեան մասին, նաեւ ականատես է տնօրինութեան վերահսկողութեան ջանքերի շնորհիւ աշխատանքների կանոնաւոր ու հեզասահ ընթացքին:

Դկտ. Առզանին ուրախութիւն յայտնելով հանդիպման եւ ծանօթացման համար, ընդհանուր եւ համապարփակ բացատրութիւն տուեց իր ղեկավարած հաստատութեան գործունէութեան եւ պարտականութիւնների մասին, շեշտելով, որ ինքը յատուկ կարեւորութեամբ հետեւում է կրօնական փոքրամասնութիւնների հետ յարաբերութիւնների առաւել սերտացմանն ու բարելաւմանը: Նա յիշեցրեց, որ Սպահանում ապրող կրօնական եւ ազգային փոքրամասնութիւնները մեծապէս յարգւում են եւ փոխադարձ յարգանքի վրայ հիմնւած համակեցութեամբ խաղաղ եւ կողք-կողքի ապրում են իրար հետ:

Հանդիպման աւարտին երկու կողմերը յոյս յայտնեցին, որ յաճախակի են դառնալու նման հանդիպումները, ինչը առաւել զարգացնելու է երկուստեք գործակցութիւնը:

Ս. ԳԷՈՐԳ ԶՕՐԱՎԱՐԻ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ ԵՐԿՕՐԵԱՅ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՄԱՆՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ուրբաթ՝ սեպտեմբերի 23-ի երեկոյեան՝ Ս. Գէորգ զօրավարի նախատօնակին, Նոր Ջուղայի համանուն եկեղեցում, նախագահութեամբ Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէչեանի եւ ներկայութեամբ հոգեւորականաց դասի ու հաւատացեալ ժողովրդի, սկզբում՝ ժամը 3:00-ին, կատարուեց աղօրհնէքի եւ ոչխարների զենման, իսկ 6:00-ին՝ Հսկումի արարողութիւնները:

Սոյն արարողութիւնների ընթացքում Հայր Սուրբը շնորհակալութիւն յայտնեց նուիրատուներին եւ բոլոր այն անձանց, ովքեր ծառայում են եկեղեցուն:

Այնուհետեւ շաբաթ՝ սեպտեմբերի 24-ի առաւօտեան

ժամը 9:00-ին, գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէջեանի ձեռամբ եւ մասնակցութեամբ քահանայից ու դպրաց դասերի սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց տօնի առթիւ, ուր նշեց նաեւ եկեղեցու անանակոչութեան տօնը: Արարողութեան երգեցողութիւնը կատարեց Ս.Ա. վանքի «Կոմիտաս» երգչախմբի միջոցով:

Յընթացս Պատարագի գերպ. Հայր Սուրբը հաւատացեալներին փոխանցեց Նոր Ջուղայում իր անդրանիկ քարոզը: Նա սկզբում անդրադարձաւ Ս. Գէորգ զօրավարի կեանքին ու գործունէութեանը եւ յանուն հաւատի նրա կատարած սխրագործութեանը, ինչի շնորհիւ էլ դասւել է սրբերի շարքին: Այնուհետեւ քարոզիչն անդրադառնալով, որ դարերի ընթացքում Ս. Գէորգ զօրավարի արժէքն ու նշանակութիւնը առաւել է պայծառացել եւ մեծացել եւ այսօր սուրբը մեծ արժէք ու նշանակութիւն ունի քրիստոնեայ ժողովուրդների մօտ, աւելացրեց. «*Մեր ժողովուրդը ամէն տարի այս օրը գնում է Աստծու սուրբ տունը եւ իր աղօթքները փոխանցում Ս. Գէորգ զօրավարին: ...Յուսամ, որ բոլոր հաւատացեալներն իրենց աղօթքների պատասխանն ստանան՝ սրբի բարեխօսութեամբ եւ իրենց հաւատքով*»:

Գերպ. Հայր Սուրբը հաւատացեալներին յորդորեց, որ Ս. Գէորգին դարձնեն իրենց կեանքի օրինակը, ներշնչեն նրանից եւ պարտութիւնների դէմ չընկճուելով՝ ձգտեն յաղթանակների:

Ս. Պատարագի աւարտին գերպ. Հայր Սուրբը երգեցիկ խմբի եւ հոգեւորականաց ու դպրաց դասի ուղեկցութեամբ մեկնեց բակ, որտեղ Մատաղօրհնէքի արարողութեամբ օրհնեց Նոր Ջուղայի Հայոց առաքելական եկեղեցեաց վարչութեան կազմակերպութեամբ եւ հարիսայի յանձնախմբի միջոցով պատրաստուած հարիսան:

Գերպ. Հայր Սուրբը շնորհակալական խօսք ուղղեց հոգեւորականաց եւ դպրաց դասերին, Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդին, Նոր Ջուղայի Հայոց առաքելական եկեղեցեաց վարչութեանը, կանանց եւ հարիսայի պատրաստման յանձնախմբերին, նուիրատուներին եւ բոլոր այն անհատներին, որոնց շնորհիւ պատշաճօրէն նշեց Ս. Գէորգ զօրավարի տօնը:

Վերջում հարիսան բաժանեց հաւատացեալ ժողովրդին:

ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ Ս. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԹԵԿՂԻ, ՎԱՌՎԱՌԷ ԵՒ ՊԵՂԱԳԵԱ ԿՈՅՍԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐՈՒԱՅ ԱՌԹԻՒ

Երեքշաբթի՝ հոկտեմբերի 4-ի առաւօտեան, Նոր Ջուղայի Ս. Մինաս եկեղեցում Ս. Պատարագի մատուցմամբ նշուեց Թեկղի, Վառվառէ եւ Պեղագեա սուրբ կոյսերի յիշատակի տօնը: Արարողութեանը նախագահում էր Կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը, իսկ օրուայ պատարագիչն էր արժն. Տ. Վարդան քհնյ. Աղաբաբայեանը. ընթացքում երգեցողութեամբ հանդէս եկան Ս. Ամենափրկչեան վանքի «Կոմիտաս» երգչախմբի անդամները:

Պատարագիչ Քահանայ Հայրն իր քարոզում անդրադառնալով յանուն քրիստոնէական հաւատի՝ կտրտանքների ենթարկուած եւ զոհ գնացած Վառվառէ սուրբ կոյսի կեանքին, կարեւորութեամբ ընդգծեց, որ եկեղեցու սուրբերն այն անհատներն են, ովքեր իրենց կեանքով ու գործով, իսկ յաճախ էլ նահատակութեամբ եւ սեփական արիւնով՝ թարգմանիչն են հանդիսացել Ս. Աւետարանի, եւ իրենց ամբողջ էութեամբ մեզ սովորեցրել են քրիստոնէութեան ճշմարտութիւնը: Նա իր քարոզի աւարտին նշելով, որ Ս. կոյսի աջը պահւում է Ս. Մինաս եկեղեցում, ներկաներին յորդորեց՝ ի սրտէ աղօթք բարձրացնեն առ Աստուած՝ իրենց կեանքում սրբերին ներկայութիւն դարձնելու եւ պարգեշտութեամբ, հաւատով ու սիրով ապրելու համար:

Ս. Պատարագի աւարտին եկեղեցու սրահում տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ գեղարուեստական յայտագրով ծրագիր՝ յագեցած երգերով ու ասմունքներով:

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ԱՐՄԷՆ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ 6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՅՑԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԾԵՐԱՆՈՑ

Երկուշաբթի՝ հոկտեմբերի 17-ի առաւօտեան, նախաձեռնութեամբ Սպահանի հայոց թեմի Կրօնական խորհրդի եւ Նոր Ջուղայի Հայոց առաքելական եկեղեցեաց վարչութեան, Ս.Ա. Վանքի «Ս. Յովսէփ Արեմաթացի» եկեղեցու տօնի առիթով, Նոր Ջուղայի Հայոց ազգային «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի 6-րդ դասարանի աշակերտ-ուհիներն իրենց ուսուցիչների եւ Ծնողական խորհրդի ուղեկցութեամբ այցելեցին Նոր Ջուղայի Հայոց ազգային ծերանոց:

Հիւրընկալների անունից բարիգալըստեան խօսք ասաց սոյն հանգստի տունը ղեկավարող հաստատութեան՝ Ն.Ջ. Հայ կանանց գթութեան միութեան վարչութեան նախագահ Արմինէ Սիմոնեանը, ապա այցելութեան նպատակների մասին արտայայտուեց Կրօնական խորհրդի ներկայացուցիչ Արմինէ Փանոսեանը: Հանդիպման ամբողջ ընթացքը վարեց ուսուցչուհի Միգանուշ Տէր-Մարտիրոսեանը, ով այցելուների անունից ողջունեց տատիկներին եւ աշակերտների ելոյթներից յետոյ՝ զրոյցի բռնուեց նրանց հետ, որի արդիւնքում ստեղծուեց շատ հաճելի մթնոլորտ: Տատիկներն իրենց բարի մաղթանքները փոխանցեցին աշակերտ-ուհիներին եւ կատարեցին գեղեցիկ երգեր: Հանդիպման աւարտին տատիկները հրաժեշտ տուեցին սաներին՝ նրանցից խոստում ստանալով կրկին այցելութեան համար:

Հանդիպմանը ներկայ էին նաեւ Կրօնական խորհրդի, Հայոց առաքելական եկեղեցեաց վարչութեան եւ Հայ կանանց գթութեան միութեան վարչութեան ներկայացուցիչները:

2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳԸ ՀՆՉԵՑ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Շաբաթ՝ սեպտեմբերի 24-ի առաւօտեան, ինչպէս երկրի տարբեր ուսումնական հաստատութիւններում, 2016-2017 ուսումնական տարեշրջանի առաջին զանգը հնչեց նաեւ Նոր Ջուղայի հայոց ազգ. դպրոցներում:

Դպրոցական տարեմուտի առթիւ Նոր Ջուղայի հայոց ազգ. կրթահամալիրի բակում համախմբուել էին «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի եւ «Քանանեան» աղջկանց ու «Կատարինեան» տղայոց միջնակարգ դըպրոցների աշակերտները, տեսչութիւնները, ուսուցչական կազմերը, Ծնողական խորհուրդներն ու ծնողները, ովքեր անհամբերութեամբ էին սպասում առաջին զանգի ղօղանջին, ինչու չէ նաեւ Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանի այցին, ով իր առաջին ժողովրդական հանդիպումն էր ունենալու հէնց այդ օրը՝ հայկական վարժարանում: Ժամը 8-ից քիչ անց դպրոց ներկայացաւ գերապատիւ Հայր Սուրբը՝ ազգային մարմինների ներկայացուցիչներից կազմուած պատուիրակութեան ուղեկցութեամբ:

Ծրագրի մեկնարկը տրուեց «Արմէն» կրթահամալիրի տեսուչ Վրէժ Շիրուանեանի խօսքով, ով դպրոցների տեսչութիւնների, ուսուցչական կազմերի եւ Ծնողական խորհուրդների անունից շնորհաւորանքի խօսք փոխանցելով ուսումնական նոր տարեշրջանի կապակցութեամբ, անդրադարձաւ սեպտեմբերին բնորոշ առիթներին՝ ուսումնական տարեմուտին, Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի Հանրապետութիւնների անկախութեան տօներին եւ Իրանի Սրբազան պաշտպանութեան շաբաթաւն, կարեւորութեամբ նշելով յատկապէս, որ այս տարի սոյն ամիսը մեր թեմում նշանաւորուել է նաեւ կաթողիկոսական փոխանորդի նշանակումով: Պրն. Շիրուանեանն իր խօսքի շարունակութեան մէջ յիշելով Իրանի հողային ամբողջականութեան պաշտպանութեան ճանապարհին զոհողութիւնների գնացած անհատներին՝ ի մասնաւորի հայ նահատակներին, իր յարգանքի տուրքը մատուցեց նրանց անթառամ յիշատակին:

Յաջորդիւ արտայայտուեց Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի ատենապետ Վրէժ Տէր-Մարտիրոսեանը: Նա ազգային մարմինների անունից շնորհաւորանքի խօսք փոխանցելով առիթի կապակցութեամբ, շեշտեց՝ դպրոցական տարիները իւրաքանչիւր անհատի կեանքի ամենայիշարժան պահերն են ու յորդորեց աշակերտութեանը, որ օգտուելով առկայ հնարաւորութիւններից, իրենց լաւագոյնը դրսեւորեն ուսման ասպարէզում եւ այս տարիներն արդիւնաւէտ դարձնեն:

Արտայայտուեցին նաեւ «Քանանեան» աղջկանց եւ «Կատարինեան» տղայոց միջնակարգ դպրոցների տեսուչներ տկն. Սալառիֆառը եւ պրն. Մոհսենփուրը: Տկն. Սալառիֆառը շնորհաւորելով տարեմուտի եւ կաթողիկոսական փոխանորդի նշանակման կապակցութեամբ, անդրադարձաւ զարգացած աշխարհում առաջադիմելու համար անհրաժեշտ գիտութիւններին ու հմտութիւններին, յոյս յայտնելով, որ աշակերտները նոր տարեշրջանի ընթացքում օգտուելով բոլոր հնարաւորութիւններից բարձրացնելու են իրենց կրթական մակարդակը: Պրն. Մոհսենփուրը նոյնպէս միանալով հնչած շնորհաւորանքներին՝ անդրադարձաւ նախորդ տարեշրջանի ընթացքում դըպ-

րոցի արձանագրած կարեւորագոյն ձեռքբերումներին՝ յատուկ շնորհակալութիւն յայտնելով ազգային մարմիններին ու խորհրդարանի նախկին պատգամաւորին՝ իրենց հովանաւորութիւնների համար:

Այնուհետեւ Կրթական խորհրդի խօսքը փոխանցուեց սոյն մարմնի ատենապետուհի Սաթենիկ Աւետումեանի միջոցով, ով իր արտայայտութեան ծիրում շնորհաւորելով սեպտեմբերեան առիթների կապակցութեամբ ասաց, որ ուսումնական տարեմուտը նշանաւորում է ոչ միայն աշակերտութեան, այլեւ ուսուցիչների համար, քանի որ նրանք վերապատրաստուած եւ նոր փորձառութիւններով վերազինուած կրթութեան ու գիտութեան ճանապարհին ուղեկից են լինելու իրենց վստահուած սերնդին՝ յատկապէս նրանց մէջ սերմանելով հայրենասիրութեան, ազնուութեան եւ աշխատասիրութեան ոգին:

Տարեմուտի հանդիսութեան եզրափակիչ ելոյթն եղաւ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանի հայրական օրհնանքը: Հայր Սուրբն իր խօսքում իր խորին շնորհակալութիւնը յայտնեց Իրանի պետութեանը եւ Կրթադաստիարակչութեան հիմնարկի պատասխանատուներին՝ հայկական դպրոցների նկատմամբ բարի կամքի դրսեւորման համար, ապա ընդգծելով, որ հայկական վարժարանը հայ աշակերտի տունն է, սաներին յորդորեց, թէ ինչպէս ցանկացած մարդ իր կեանքի ասպարէզում պատերազմ է մղում զանազան բնոյթի ճակատներում, իրենք եւս պատերազմեն կրթութեան ճանապարհին: Կաթողիկոսական փոխանորդն իր պատգամն աւարտեց յաջողութեան մաղթանքներով՝ ուղղուած դպրոցի պատասխանատուներին, աշակերտներին եւ ծնողներին:

Վերջում բոլորը միասնաբար արտասանեցին Տէրունական եւ «Զգործս ձեռաց մերոց...» աղօթքները, որից յետոյ Հայր Սուրբը հնչեցրեց ուսումնական տարեշրջանի առաջին զանգը:

Այնուհետեւ Հայր Սուրբն ու նրան ընկերակցող պատուիրակութիւնը ներկայացան Նոր Ջուղայի հայոց ազգ. մանկապարտէզ-նախակրթարան, որտեղ նոյնպէս տեղի ունեցաւ տարեմուտի արարողութիւնը՝ ներկայութեամբ դպրոցի աշխատակազմի, Ծնողական խորհրդի, սաների եւ նրանց ծնողների:

Սկզբում դպրոցի տեսչուհի Քառոլին Դիլանչեանը շնորհաւորեց բոլորին տարեմուտի եւ կաթողիկոսական փոխանորդի նշանակման կապակցութեամբ, ապա խօսքը փոխանցեց գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանին: Հայր Սուրբը հաճելի զրոյց ունենալով փոքրիկների հետ՝ յաջողութիւն մաղթեց նրանց, ապա դիմելով ծնողներին իր ուրախութիւնը յայտնեց հայկական վարժարանում հայ աշակերտների գրաճանաչ դառնալու կապակցութեամբ եւ իր գնահատանքի խօսքն ուղղեց նրանց՝ իրենց զաւակների ուսման հարցում ցուցաբերած զոհողութիւնների եւ նրանց հայկական դպրոցներում կրթութեան տալու համար: Նա իր խօսքի շարունակութեան մէջ նշելով դպրոցական տարեմուտի եւ Ս. Գէորգ զօրավարի տօների զուգադիպման մասին, աղօթեց, որ Սուրբը բարեխօս հանդիսանայ Բարձրեալին, որպէսզի նա օրհնի հայ աշակերտներին, ծնողներին եւ դպրոցների պատասխանատուներին ու նրանց յաջողութիւններ պարգեւի՝ յանուն հայրենիքի եւ համայնքի փայլուն ապագայի կերտման:

Միասնական աղօթքից յետոյ այս դպրոցում նոյնպէս Հայր Սուրբի ձեռամբ հնչեց առաջին զանգը:

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՕՆԻ ԱՌԹԻՒ ԽԱՆԴԱՎԱՌ ՕՐ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐՆՈՒՄ

Մանուկների համաշխարհային տօնը, գեղեցիկ բողբոջների՝ թոթովախօս մանուկների համար յիշարժան դարձնելու նպատակով՝ Նոր Ջուղայի հայոց ազգ. մանկապարտէզ-նախակրթարանի տեսչութեան, ուսուցչական կազմի ու ծնողական խորհրդի գեղեցիկ մտայղացմամբ, դպրոցական մի օրը վերածուեց հաճելի անակնկալներով ողողուած միջոցառման, որի աւարտին անհնար էր չնկատել մանուկների դէմքերից չհեռացող ժպիտն ու աչքերի փայլը:

Կիրակի՝ հոկտեմբերի 9-ի առաւօտեան, երբ դեռ սաները մէկը միւսի յետեւից դպրոց էին մուտք գործում, առաջին անակնկալը նրանց մատուցեց հէնց մուտքի մօտ, քանի որ հսկայական Վինի արջուկ տիկնիկը դպրոցական համազգեստով հագնուած նստած էր այնտեղ եւ իր ժպտուն հայեացքը չէր կտրում զարմացած երեխաների ծաղկադէմ երեսից:

Այնուհետեւ նախքան դասարան մտնելը, ուսուցիչներից բացատրեց Մանուկների համաշխարհային տօնի վերաբերեալ եւ փոքրիկները տեղեկացան Վինի Թուխի անակնկալ այցելութեան պատճառի մասին՝ անհամբերութեամբ սպասելով յաջորդ նորութիւններին:

Օրուայ շարունակութեան մէջ բոլոր սաների մասնակցութեամբ կազմակերպուեց թոկ քաշելու մրցոյթ, որը մեծ խանդավառութիւն առաջացրեց նրանց մօտ, իսկ որպէս վերջաբան տիկնիկներով բեմականացուեց «Կարմիր գլխարկը» աշխարհահռչակ հեքիաթը: Տիկնիկների բեմադրողներն էին դպրոցի ծնողական խորհրդի անդամները, ովքեր ջանք չէին խնայել գեղեցիկ տիկնիկների պատրաստման եւ հեքիաթին համապատասխան բեմայարդարման ուղղութեամբ: Վերջում մանուկներն ստացան նուէրներ:

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՐՑՈՅԹՆԵՐՈՒՄ

2015-2016 ուսումնական տարեշրջանի ընթացքում Նոր Ջուղայի հայոց ազգային դպրոցների աշակերտները յատկապէս փայլուն յաջողութիւններով աչքի են ընկել Իրանի սահմաններից դուրս՝ միջազգային եւ համահայկական մրցոյթներում, որոնց մասին տեղեկացել ենք պատկան դպրոցների պատասխանատուների միջոցով:

Յաջողութիւններ, որոնք ոչ միայն ծնողների եւ դպրոցների պատասխանատուների ուրախութեան ու հպարտութեան առիթ են հանդիսացել, այլեւ խանդավառել են համայնքի անդամներին՝ առաւել եւս նրանց համոզելով, որ հայկական վարժարաններն այն եզակի կրթօջախներն են, որտեղ ծնող-դպրոց սերտ համագործակցութեան, դպրոցի անձնակազմի ջանադիր աշխատանքի եւ ազգային մարմինների անվերապահ հովանաւորութեան շնորհիւ, անհնարինը հնարաւոր է դառնում եւ յաջողւում է մատաղ սերնդին լաւագոյնս կրթել, դաստիարակել հայկական շնչով ու ոգով եւ յատկապէս նրանց համար ստեղծել բազմակողմանի զարգանալու հնարաւորութիւններ:

Նշած տարեշրջանում Նոր Ջուղայի «Քանանեան» աղջկանց միջնակարգ դպրոցի յատուկ դասաւորութեամբ, սոյն դպրոցի մի շարք աշակերտուհիներ իրենց մասնակցութիւնը ցուցաբերեցին Հոնգկոնգում կայացած «Հարմոնիա 2016» խորագրով նկարչութեան եւ լուսանկարչութեան միջազգային մրցոյթին, որի արդիւնքում նկարչութեան բաժնում իր իւղաներկ աշխատանքով առաջին պատուաւոր տեղը գրաւեց 11-րդ դասարանի աշակերտուհի Արփա Մարգարեանը՝ արժանանալով «Գրանդ փրայզ» (Grand prize) Ա կարգի մրցանակին: Նա կազմակերպիչների հրաւէրով օգոստոս ամսին ժամանեց Հոնգկոնգ՝ մասնակցելու մրցոյթի մրցանակաբաշխութեան հանդիսաւոր արարողութեանը, ուր պարգեւատրուեց նշած մրցանակով եւ դրամական նւէրով: Այս բացառիկ յաջողութիւնը մեծ արձագանք է գտել նաեւ Սպահան քաղաքի 3-րդ շրջանի Կրթադաստիարակչութեան հիմնարկի շրջանակում:

Յատկանշական է, որ նոյն մրցոյթի նկարչութեան բաժնին մասնակցել էին նաեւ «Քանանեան» դպրոցի 9-րդ եւ 8-րդ դասարանների աշակերտուհիներ Լուսին Մինասեանն ու Ալմարա Թահմազեանը, իսկ լուսանկարչութեանը՝ նախահամալսարանական օղակից Թանիա Մինասեանն ու Թինա Յովսէփեանը եւ 8-րդ դասարանից Անիա Յովհաննիսեանը, որոնց աշխատանքներն արժանացել են մրցոյթի (Certificate of Merit) պատուոյ գրին:

Իսկ անդրադառնալով համահայկական մրցոյթներին՝ պէտք է նշել, որ այս տարի Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան եւ գիտութեան նախարարութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ մանկա-պատանեական նկարչական 6-րդ համահայկական մրցոյթ-փառատօնը, որը կրում էր «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» խորագիրը: Միջնադարեան Հայաստանի մշակոյթի երկու բնագաւառներին՝ ժողովրդական բանահիւսութեանն ու մանրանկարչութեան կապին անդրադարձ ունեցող այս մրցոյթ-փառատօնին մասնակցելու հնարաւորութիւն ունեցան արուեստի հանդէպ սէր եւ կարողութիւն դրսեւորող հայկական կրթօջախներում ուսանող 6-18 տարեկան սաները՝ կրտսեր եւ աւագ խմբաւորումների ներքոյ:

Փառատօնի առաջին փուլի արդիւնքում մասնագիտական յանձնաժողովի կողմից տրուած գնահատականների հիման վրայ յաղթող ճանաչուեցին մի շարք նկարչութիւններ, որոնց շարանում աչքի էին ընկնում Ն.Ջ. «Արմէն» երկսեռ տարրական կրթահամալիրի սաներ՝ 6-րդ դասարանից Արփինէ Մովսիսեանի, առաջին դասարանից Բիւրեղ Տէր-Յովհաննիսեանի, իսկ «Քանանեան» աղջկանց միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի աշակերտուհի Թէա Թահմազեանի նկարչութիւնները: Յաղթող աշխատանքները կը ներկայացուեն Գեղագիտութեան ազգային կենտրոնի ցուցահանդէսում եւ կը տպագրուեն սոյն ցուցահանդէսի պատկե-

րագրքում:

Սոյն յաջողութիւնների առթիւ շնորհաւորում ենք աշակերտներին, նրանց ընտանիքներին, ինչու չէ նաեւ պատկան դպրոցների ջերմեռանդ անձնակազմին ու նորանոր նւաճումներ ենք մաղթում նրանց՝ կեանքի բոլոր ասպարէզներում:



ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԽԱԺԱԿ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ՏԱՄՆՀԻՆԳԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

Կրթական մշակ, ազգային-հասարակական գործիչ, Հայ Դատի անխոնջ նւիրեալ ու հաւատաւոր դաշնակցական Խաժակ Տէր-Գրիգորեանի մահւան 15-ամեակի առթիւ, նաեւ ննջեցեալ միւս գաղափարակից ընկերների յիշատակին, Հ.Յ.Դ. «Ռուբէն» երիտասարդական միութեան նախաձեռնութեամբ, ուրբաթ՝ սեպտեմբերի 30-ի առաւօտեան, Նոր Ջուղայի հայոց ազգային գերեզմանատանը տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն՝ թեմի քահանայից ու դպրաց դասերի, կուսակցական ընկերների եւ ժողովրդի մասնակցութեամբ:

Խաժակ Տէր-Գրիգորեանի դին ամփոփւած է Եւրեւանում, սակայն Նոր Ջուղայի գերեզմանատան մի հատւածում, ուր առյաւէտ հանգիստ է առել նրա կուսակցական ընկեր Թադէոս Թադէոսեանը, գաղափարի ասպետի անմոռաց յիշատակին կանգնեցւած է յուշաքար, որի մօտ էլ իրականացուեց հոգեհանգստեան պաշտօնը:

Միջոցառման սկզբնական բաժնում ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Հ.Յ.Դ. «Ռուբէն» երիտ. միութեան վարչութեան ներկայացուցիչ Արմօ Մինասեանը, ապա հնչեց Հ.Յ.Դ.-ի օրհներգ «Մշակ բանւոր»-ը՝ միասնական կատարմամբ:

Յաջորդիւ, քահանայից ու դպրաց դասերի միջոցով իրականացուեց հոգեհանգստեան կարգը, որն աւարտուեց առ Աստւած բարձրացւած «Տէրունական» աղօթքով:

Կազմակերպիչ միութեան անդամուհի Նինելիա Աբրահամեանը հակիրճ ներկայացնելով հայ ժողովրդի արժանաւոր այս զաւակի կենսագրական գծերը՝ շեշտեց, որ ընկ. Խաժակի նման հայորդիները, իրենց հայրենիքը բարձր դասելով, ամբողջ հոգով ու սրտով նւիրւել են հայ ազգի ու հայրենիքի պաշտպանման եւ հայ պատանի-երիտասարդների արժանավայել դաստիարակման սուրբ գործին. թող նրանց բոլորի յիշատակը յաւերժ անմահ մնայ մեզանից իւրաքանչիւրի սրտում:

Վերջում ներկաները խնկարկեցին Խաժակ Տէր Գրիգորեանի եւ այդ հատւածում ննջած միւս կուսակցականների յիշատակին, ապա գերեզմանատնից հեռացան, իրենց մտքում յաւերժացնելով հանգուցեալի յուշաքարին քանդակւած հետեւեալ խօսքը, որը ժամանակին ասել է իր գաղափարակից ընկերոջ Յարութ Տէր-Մարտիրոսեանի միջոցով. «*Խաժակ Տէր-Գրիգորեանը այն բացառիկ մեծութիւններից էր, որը յաղթել էր մարդկային նկարագրի ամենագօրաւոր, բայց եւ ամենաատելի ախտ հրէշին՝ ես-ին*»:

Հ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 126-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Նախաձեռնութեամբ Հայ Դատի «Արձագանք» քարոզչական յանձնախմբի, ուրբաթ՝ հոկտեմբերի 21-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան սրահում տեղի ունեցաւ հանդիսաւոր տօնախմբութիւն՝ յանուն հայ ժողովրդի ու հայրենիքի ծնունդ առած կուսակցութեան՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 126-ամեայ յոբելեանի առթիւ:

Միջոցառմանը ներկայ էին՝ Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը, Շահինշահիր հայ համայնքի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը, քահանայից դասը, Իրանի Իսլ. խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ժորժիկ Աբրահամեանը, շրջանի Հայ Դատի յանձնախմբի անդամները, ազգային մարմինների, հայոց դպրոցների եւ միութիւնների ներկայացուցիչներ, գաղափարակից կուսակցականներ եւ ժողովուրդ:

Երեկոն սկիզբ առաւ ՀՅԴ քայլերգ «Մշակ Բանուոր»-ի յոտնկայս ունկնդրութեամբ: Այնուհետեւ հանդիսավար Մանիա Ղուկասեանն իր բացման խօսքում անդրադառնալով Դաշնակցութեան ծնունդին եւ 126-ամեայ անխափան ուղու կարեւորագոյն գործունէութեանը նշեց. «*Հայապահպանութիւնն ու Սփիւռքի կազմակերպումը երբեւէ ինքնանպատակ չդարձաւ, քանի որ Դաշնակցութիւնը նոյնիսկ 70 տարիներ հայրենիքից տարագրուած լինելով, երբեւէ չդադարեց հայրենակենտրոն լինելուց: Իր հիմնադրութիւնից ուղիղ մէկ դար յետոյ Դաշնակցութիւնը կրկին հայրենիքում էր, մեր նոր պատմութեան կիզակէտում՝ Հայաստանի Հանրապետութեան վերանկախացման ու նոր պետականութեան կերտման, Արցախեան ազատագրական պայքարի ու միջազգային կարգավիճակի հաստատման, Ջաւախքին նեցուկ հանդիսանալու, Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ հատուցման գործը պետական մակարդակով հետապնդելու ճակատներում, որոնք բնութագրում են Դաշնակցութեան վերջին քառորդ դարեայ պատմութիւնը*»:



Բացման խօսքին յաջորդեց երեկոյի բանախօսական բաժինը, որտեղ ելոյթ ունեցաւ ազգային-հասարակական գործիչ Նոէլ Մինասեանը: Բանախօսն իր արտայայտութիւնների սկզբնական բաժնում նշելով, որ կուսակցութեան հիմնադրման ամեակների նշումը, դաշնակցութեան աշխարհասփիւռ կառոյցների համար ձեւաւորուել է՝ որպէս ժողովրդին հաշուետուութիւն ներկայացնելու օր եւ կուսակցութեան քաղաքական ու հասարակական գործունէութիւնը, ինչու չէ նաեւ ձեռքբերումներն ու բացթողումները գնահատելու լաւագոյն առիթ, աւելացրեց. «1924 *թւականին, քաղաքական նոր պայմանների, Դաշնակցութեան տարագրութեան եւ յեղափոխական գործիչների կենսամակարդակից առաջացած մի շարք մտահոգութիւնների պատճառով, Փարիզում գումարուած ՀՅԴ* 10-*րդ Ընդհանուր ժողովում որոշուեց իւրաքանչիւր տարի՝ նախընտրաբար հոկտեմբեր ամսին, նշել Դաշնակցութեան օրը եւ սոյն յոբելեանական միջոցառումների նուիրահաւաքներից գոյացած գումարներն ամբողջութեամբ յատկացնել վետերանների հիմնադրամին*: 1972-*ին՝ ՀՅԴ* 20-*րդ Ընդհանուր ժողովը նկատի առնելով կատարուած սերնդափոխութիւնը եւ այն հանգամանքը, որ այլեւս վետերաններին նիւթապէս օժանդակելու անհրաժեշտութիւն չկար, աւարտուած համարեց իր այդ առաքելութիւնը, սակայն պահպանեց կուսակցութեան հիմնադրման օրը նշելու աւանդութիւնը*»:

Նոէլ Մինասեանն իր խօսքի շարունակութեան մէջ թւարկելով 126-ամեայ կուսակցութեան գործունէութեան կարեւորագոյն աշխատանքներից՝ ինքնապաշտպանական կռիւների եւ կամաւորական շարժումների կազմակերպումը, Արցախի ազատագրական պայքարը, Սփիւռքի կազմակերպումը եւ Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման ու դատապարտման, ինչու չէ նաեւ Հայաստանի վերանկախացման ուղղութեամբ իրականացուած աշխատանքները, անդրադարձ ունեցաւ Դաշնակցութեան մերօրեայ առաքելութեանը՝ այն ամփոփելով հետեւեալ կէտերի ներքոյ. ա) Հայաստանի Հանրապետութեան պետականութեան հզօրա-

ցում, տնտեսութեան զարգացում եւ ժողովրդավարութեան հիմքերի ամրապնդում, բ) Արցախի հարցի շուրջ բանակցութիւնների հանգուցալուծում, գ) Սփիւռքահայութեան խնդիրների լուծում եւ յատկապէս Միջին Արեւելքի ռազմական գործողութիւնների կիզակէտում յայտնուած սիրիահայութեան ինքնապաշտպանութեան կազմակերպում ու անվտանգութեան ապահովում, դ) Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ դատապարտման ուղղութեամբ աշխատանքների իրագործում: Բանախօսն իր խօսքը եզրափակեց ընդգծելով հետեւեալ տողերը. «*Դաշնակցութիւնը գործեց յանուն հայ ժողովրդի՝ հաւատալով նրա ուժին եւ կարողութեանը, իսկ այսօր դարձեալ կուսակցութիւնը ապաւինում է իր ժողովրդին՝ բոլոր մարտահրաւէրները դիմագրաւելու համար՝ յոյսի եւ յաղթանակի ակնկալիքով*»:

Ծրագրի երկրորդ բաժնում հանդիսատեսը ոգեշնչուեց ազգային-յեղափոխական երգերով՝ Երեւանի Կոմիտասի անուան պետական երաժշտանոցի հայկական երգեցողութեան բաժնի դասախօս, երգիչ Սամուէլ Գալըստեանի կատարմամբ. սոյն բաժինը համեմուեց հանդիսավարի միջոցով՝ ՀՅԴ հիմնադիրների ու գործիչների խօսքերի մէջբերմամբ:

ՆՈՐ ՋՈՒՂԱՅ ԴԻՄԱՒՈՐԵՑ ԹԵՀՐԱՆՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 48-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԻ ՋԱՀԸ

Համահայկական 48-րդ խաղերի խորհրդանշական ջահը ուրբաթ՝ սեպտեմբեր 2-ի առաւօտեան, հանդիսաւոր արարողութեամբ վառուել է Ս. Թադէի վանքի խորանի կանթեղից, ձեռամբ Ատրպատականի Հայոց թեմի առաջնորդ՝ գերշ. Տ. Գրիգոր եպս. Չիֆթճեանի:

Խաղերը կազմակերպող Թեհրանի Հայ մշակութային «Արարատ» կազմակերպութեան որոշմամբ ջահը պիտի անցնէր իրանահայ երեք թեմերից, այդ իսկ նպատակով երեքշաբթի՝ սեպտեմբերի 6-ի երեկոյեան, խաղերի կազմակերպչական աշխատանքները համակարգող յանձնախմբի անդամներ՝ Արգին եւ Արգամ Արիստակէսեանների միջոցով ջահը հասաւ Նոր Ջուղա, որին Ս. Ամենափրկչեան վանքի բակում դիմաւորեցին գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը, Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի եւ Թեմական խորհրդի ատենապետերը, Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան կենտրոնական վարչութեան եւ Մարզական միաւորի վարչութեան ներկայացուցիչներն ու Նոր Ջուղայի մարզուհիները, ովքեր մաս են կազմում Համահայկական 48-րդ խաղերի ջահակիր խմբին:

Սպահանի Հայոց թեմից կրակը վերցնելու հանդիսաւոր արարողութիւնը կատարուեց Հայոց Ցեղասպանութեան Ս. Նահատակների յիշատակը յաւերժացնող յուշարձանի մօտ, որտեղ միասնական աղօթքից յետոյ, գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը հանդէս եկաւ ողջոյնի եւ գնահատանքի խօսքերով, ուղղուած՝ Թեհրանի հայոց թեմի պատասխանատուներին ու խաղերի կազմակերպիչներին եւ իր խօսքը աւարտեց միասնութեան խորհրդանիշ՝ Համահայկական խաղերի յաջող եւ խաղաղ ընթացք ունենալու բարեմաղթանքներով: Այնուհետեւ ջահը վառեց յուշարձանի յաւերժ կրակով եւ այն յանձնեց Սպահանի գլխաւոր ջահակիր՝ աթլետիկայի մարզուհի Վանա Շիրուանեանին, ով ուղեկցութեամբ ջահակիր խմբի անդամներ Մինելի Ղազարեանի, Մանէ Յովսէփեանի եւ Անիա Թորոսեանի շրջեց Ս.Ա. Վանքի բակով եւ Թեհրանի հայոց թեմը փոխադրելու նպատակով, այն յանձնեց Հ.Մ.Ա.Կ.-ի ներկայացուցիչ՝ Արգին Արիստակէսեանին:

ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑԸ Ն.Ջ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՏԵՂԻ

Երկուշաբթի՝ հոկտեմբերի 10-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Սպահանի հայոց թեմի նորանշանակ Կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը ընկերակցութեամբ ԻԻ Խորհրդարանում Սպահանի եւ հարաւային իրանահայութեան պատգամաւոր Ժորժիկ Աբրահամեանի, թեմի Պատգամաւորական ժողովի ատենապետ Վարուժ Մինասեանի եւ Կրօնական խորհրդի ատենապետ Վարուժ Մովսիսեանի, ճանաչողական այցով ներկայ գտնուեց Նոր Ջուղայի Հայ մարզա-մշակութային «Արարատ» միութեան կենտրոնատեղի, ուր Հայր Սուրբին դիմաւորեցին միութեան Կենտրոնական վարչութեան անձնակազմը:

Վարչութեան նախագահ Մասիս Մինասեանը ողջունեց Հայր Սուրբի ներկայութիւնը եւ շնորհաւորանքի ու բարեմաղթանքների խօսք ուղղեց նրան՝ Սպահանի հայոց թեմում Կաթողիկոսական փոխանորդ նշանակուելու առթիւ, ապա ներկայացրեց Կենտրոնական վարչութեան կազմին եւ ծանօթացման գծով տեղեկութիւններ փոխանցեց միութեան մէջ ծաւալւող մարզա-մշակութային աշխատանքների, բաժանմունքների եւ հայեցի դաստիարակութեան ու հայապահպանման առումով միութեան նշանակալի դերի մասին:

Գերպ. Հայր Սուրբն եւս իր ուրախութիւնը յայտնեց «Արարատ» միութեան յարկի ներքոյ հիւրընկալուելու եւ աշխատանքներին ծանօթանալու առթիւ եւ յաջողութիւն մաղթեց միութեան պատասխանատուներին: Այնուհետեւ ուղեկցութեամբ Կենտրոնական վարչութեան ներկայացուցիչների շրջեց միութեան բաժիններն ու ծանօթացաւ միութեան կառոյցին, շինարարական աշխատանքներին ու կատարուած նորոգութիւններին:

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՕՆԻ ԵՒ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՇԱԲԱԹՈՒՆ ՆՒՒՐՈՒԱԾ ՁԵՌԱՐՈՒԵՍՏԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Սրբոց թարգմանչաց եւ Հայ մշակոյթի շաբաթուայ առիթով, հոկտեմբերի 14-ից 16-ը Նոր Ջուղայի Հայ մարզա-մշակութային «Արարատ» միութեան հանդիսութիւնների դահլիճում տեղի ունեցաւ ձեռարուեստի բացառիկ ցուցահանդէս: Ցուցահանդէսի կազմակերպողը նոյն միութեան Մշակութային միաւորի վարչութիւնն էր, եւ այդ աշխատանքի իրականացման գործին մասնակցութիւն էին բերել Նոր Ջուղայի հայոց ազգ. դպրոցներն ու համայնքում գործող միութիւնները:

Ցուցահանդէսի բացումը կատարուեց Սպահանի հայոց թեմի կաթողիկոսական փոխանորդ՝ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանի եւ նրան ընկերակցող քահանայից դասի, ազգային իշխանութեան ներկայացուցիչ-

ների եւ ցուցահանդէսին մասնակից դպրոցների ու միութիւնների պատասխանատուների եւ արուեստասէր հասարակութեան այցելութեամբ, որտեղ ցուցադրուած էին՝ հայկական տարբեր շրջանների տարազներ եւ 1915 թւից տնային պայմաններում լաւապէս պահպանուած եւ մինչեւ մեր օրերը հասնող Նոր Ջուղայի կանանց բազմաոճ ձեռարուեստի եզակի նմուշներ, նաեւ Հայոց ազգային դպրոցների աշակերտական աշխատանքներ, որոնք իրենց պատգամով, գեղեցկութեամբ, ինչպէս նաեւ ցուցահանդէսի բարձրաճաշակ դասաւորութեամբ արժանացան այցելուների յիացմունքին ու բարձր գնահատանքին:

Ներկաներին ողջունեց Մշակութային միաւորի վարչութեան նախագահ Քարմէն Ղեւեանը, ով շնորհաւորելով Հայ Մշակոյթի տօնը, տեղեկութիւն փոխանցեց ցուցահանդէսի կազմակերպման եւ ցուցադրուած աշխատանքների մասին եւ շնորհակալական խօսք ուղղեց բոլոր նրանց, որոնց համագործակցութեամբ իրականացաւ ցուցահանդէսի կազմակերպումը:

Յաջորդիւ որպէս շնորհակալական եւ երախտագիտութեան արտայայտութիւն յուշանուէր շնորհուեց գերպ. Հայր սուրբին, միութեան Կենտրոնական վարչութեանը եւ ցուցահանդէսին մասնակից Հայոց ազգ. «Քանանեան» աղջ. եւ «Կատարնիեան» տղ. դպրոցների, «Արմէն» երկսեռ կրթահամալիրի, Հայուհեաց բարեգործական ընկերութեան, Հայ կանանց գթութեան, Փերիոյ կրթասիրացաց եւ Հայ ուս. Շհարմահալ միութիւնների պատասխանատուներին: Յուշանուէրները յանձնեցին գերապատիւ հայր սուրբը եւ Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Կենտրոնական վարչութեան նախագահ Մասիս Մինասեանը:

Յուշանուէրների յանձնումից յետոյ, խօսքը տրուեց գերապատիւ Հայր Սուրբին, ով շնորհակալութիւն յայտնելով իրեն շնորհուած յուշանուէրի համար, իր հիացմունքը եւ գոհունակութիւնը յայտնեց Սրբոց թարգմանչաց տօնին նուիրուած նման ցուցահանդէս կազմակերպելու կապակցութեամբ: Անդրադառնալով ցուցահանդէսի բովանդակութեանը, այն որակեց՝ «*Մայր-գաւակի ձեռակերտ արուեստի եւ մշակոյթի մի նոր թանգարան, որ դրուել էր այցելուների հոգեկան եւ մտային ճաշակումի եւ վայելքի առջեւ*»:

Գերպ. Հայր սուրբն իր խօսքն եզրափակեց շնորհակալական, գնահատանքի եւ քաջալերանքի խօսքերով, ուղղուած՝ միութեան Կենտրոնական վարչութեանն ու Մշակութային միաւորի վարչութեանը, միութիւնների պատասխանատուներին, դպրոցների տնօրինութեանը, ուսուցչական կազմերին, աշակերտներին եւ բոլոր այն անհատներին, որոնց համագործակցութեամբ իրականացաւ Հայ մշակոյթի շաբաթուան նուիրուած ցուցահանդէսը:

Ցուցահանդէսի աշակերտական բաժիններից կարեւոր է յիշել Հոնգկոնգում կայացած «Հարմունի» խորագրով արուեստի միջազգային մրցոյթին Հայոց ազգ. «Քանանեան» աղջ. դպրոցը ներկայացնող՝ առաջին տեղը գրաւեցրած եւ «Grand prize» մրցանակին արժանացած իւղաներկ նկարչութիւնը, Իրանի «Խարազմի» փառատօնում եւ համահայկական մրցութիւններում նոյն դպրոցը ներկայացրած եւ մրցանակ շահած նկարչութիւնները, Հայաստանում կայացած համահայկա-

կան նկարչութեան մրցոյթում «Արմէն» երկսեռ կրթահամալիրը ներկայացնող մրցանակակիր նկարչութիւնները, ինչպէս նաեւ «Կատարինեան» տղ. դպրոցի մանրակերտ աշխատանքները. միութիւնները ներկայացնող աշխատանքներից յիշենք հայկական տարբեր շրջանների տարազների, ասեղնակարերի, մարաշի ասեղնակարի, ասեղնագործի, մքուքագործի, ճաղագործի ու կեռասեղի եւ կարպետագործութեան հին ու նոր բացառիկ նմուշները, ինչպէս նաեւ հարսանեկան նկարազարդ ու քանդակագործ շաքարները եւ ասեղնակար «Կանաչ-կարմիր»-ները, որոնք մինչ այսօր համարւում են իրանահայութեան հարսանեաց ծէսերի կարեւոր եւ անբաժան մասնիկը:

Նշելի է, որ եռօրեայ ցուցահանդէսն արժանացաւ բազմահարիւր այցելուների գնահատանքին: Հայոց ազգային դպրոցների աշակերտութիւնը եւս ուղեկցութեամբ դպրոցների տեսչութիւնների, ուսուցչական կազմերի եւ ծնողական խորհուրդների այցելեցին ցուցահանդէսը:

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՕՆԻՆ ՆՒԻՐՒԱԾ ԲԱՆԱԽՕՍԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՒԵՍՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Նոր Ջուղայում, Սրբոց Թարգմանչաց եւ Հայ մշակոյթի տօնին նուիրուած ձեռնարկների շարանում, ուրբաթ՝ հոկտեմբերի 28-ի երեկոյեան Ն.Ջ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան հանդիսութիւնների դահլիճում տեղի ունեցաւ բանախօսական եւ գեղարուեստական յայտագրով յագեցած ձեռնարկ:

Նախաձեռնութիւնը նոյն միութեան Մշակութային միաւորի վարչութեանն էր եւ վայելում էր Սպահանի հայոց թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանի հովանաւորութիւնն ու ներկայութիւնը: Ներկայ էին նաեւ Շահինշահիրի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը, քահանայից դասի, ազգային մարմինների, շրջանիս Հայ Դատի յանձնախմբի, դպրոցների եւ միութիւնների ներկայացուցիչները եւ թարգմանչած վարդապետների յիշատակը յարգող հոծ թւով ներկաներ:

Երեկոն սկիզբ առաւ հաղորդավարուհի Սօսէ Ասատրեանի ողջոյնի խօսքով: Նա յետադարձ հայեացք նետելով 4-րդ դարում հայ ժողովրդի իրավիճակին, նրա փրկութիւնը, միասնութիւնը ու ինքնութիւնը ապահովելու ամենահզօր ազդակը համարեց հայ տառերի գիւտը եւ նրա հետագայ զարգացումներն ու ասաց. «…1600-*տարի առաջ սկսւած ընթացք է դա, շարժում, հեղեղ, որ քանի գնում այդքան յորդանում է ու խորանում՝ հոսելով դէպի գալիք ովկիանոսը*»:

Օրւայ առթիւ հրաւիրուած էր բանախօսելու «Մշակութային ժառանգութիւն» կազմակերպութեան պաշտօնեայ Զոյեա Խաչատրեանը, ով բնութագրելով հայ մշակոյթ հասկացութիւնը, կենտրոնացաւ 4-րդ դարում սկսւած հայոց պատմութեան կարեւոր ու հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակութիւն ունեցող իրադարձութիւններին, այն է՝ քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակելը, Հայաստանը Պարսկաստանի եւ Բիւզանդիայի մէջ բաժանելուց յետոյ հայ ինքնութիւնը պահպանելու մեծ նշանակութիւն ունեցող տառերի գիւտը եւ նրա հետագայ զարգացումները, ինչպէս՝ հայ դպրոցի հիմնադրելը, Ս. Գրքի թարգմանութիւնը, գրչագրութեան եւ արուեստի այլ ճիւղերի զարգացումը, որոնց ուղին սրբագործեց Վարդանանց եւ Վահանանց հերոսամարտերով, նշելով՝ «*Ո՛չ պետականութեան բացակայութիւնը, ո՛չ կրօնական-եկեղեցական երկպառակութիւնը, ո՛չ տարբեր ցեղերի արշաւանքները եւ ոչ էլ հայրենազրկումն ու տարագրութիւնը, չպիտի կարողանային վերացնել հայ ժողովրդի ինքնութեան ոգին, նրա ազգային գիտակցութիւնը եւ հոգեւոր մշակոյթը, որովհետեւ նա արդէն ձեռք էր բերել անխախտելի մի ամրոց եւ մի հոգեւոր հայրենիք. դա մայրենի գիրն ու գրականութիւնն էր*»: Յարգելի բանախօսուհին իր ելոյթը աւարտեց այսպէս. «*Ժամանակն*

է յետադարձ հայեացք նետել անցեալին, թերութիւններից ու բացթողումներից դասեր քաղել եւ անկեղծանալ ինքներս մեզ հետ, ապա յստակ մշակւած եւ իրագործւող նոր գաղափարներով ու քաղաքականութեամբ տրւել 21-րդ դարի յորձանքներին։ Մեզ մնում է այս դարաւոր աւանդոյթը, այս հզօր գէնքը ճանաչել, փայփայել, պահպանել եւ նրան նոր շունչ հաղորդելով՝ յանձնել գալիք սերունդին»։

Գեղարւեստական բաժինը ներկայացւեց միութեան Մշակութային միաւորի «Կռունկ» համոյթի եւ անհատ երգիչների միջոցով: Ասմունքի խմբի պատասխանատուները եւ գեղարւեստական ղեկավարներն էին Ռիմա Սիմոնեանը եւ Կարին Տէր-Մարտիրոսեանը, պարուսոյց՝ Նունէ Մկրտչեանը, իսկ երգի ղեկավար՝ Մարտին Թերմադօն:

Ներկայացւեց հայ գրականութեան անդաստանից՝ Եղիշէ Չարենցի գրչին պատկանող «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծութեան վրայ կառուցւած կոմպոզիցիան՝ Հայաստանի ոգեղէն պատմութիւնը, որը սկսւեց արեւահամ բառից հասնելով մինչեւ երկաթագիր գրքեր եւ իր ներկայացման բացառիկ ոճի, կատարման հիանալի կարողականութեան ու բեմային տարրերի գեղեցկութեամբ, արժանացաւ հանդիսատեսի հիացմունքին ու բարձր գնահատանքին:

Ցայտագիրը սկսւեց Սայեաթ Նովայի «Թամամ աշխարհ պտուտ էկայ» եւ «Դուն էն գլխէն իմաստուն իս» բանաստեղծութիւնների ներկայացմամբ, որոնք ասմունքեցին Մանիա Ղուկասեանը եւ Լեոնիկ Ծատուրեանը՝ պարային կատարմամբ համեմւած: «Մախմուր աղջիկ» պարը մատուցւեց պարախմբի հեզաճկուն աղջիկների միջոցով, որին յաջորդեց «Երկիր» բանաստեղծութեան կատարումը՝ Ալինա Տէր Սուքիազեանի, Լալագէ Իսաղուլեանի եւ Մեղրի Ղուկասեանի միջոցով եւ զուգահեռ ներկայացւեց պար, որի աւարտին բեմում տեղադրւած պաստառի վրայ պարուհիների միջոցով դրոշմւեց Հայոց եռագոյնի գոյները:

«Տուն իմ հայրենի» երգի անզուգական կատարմամբ հանդէս եկաւ Վանանդ Իսաղուլեանը, որից յետոյ «Մերը՝ ոգին է...» բանաստեղծութիւնը գեղեցկօրէն ասմունքեց Թանիա Մինասեանը: «Գորանի» պարը հիանալի կերպով ներկայացւեց պարախմբի միջոցով, որը ստեղծեց բարձր տրամադրութիւն: Ցայտագիրը եզրափակւեց «Ես իմ անուշ Հայաստանի» երգի իւրովի կատարմամբ՝ Թանիա Մինասեանի, Մարտին Թերմադօի, Նարբէյ Գէորգեանի եւ Վանանդ Իսաղուլեանի միջոցով ու Ելենա Մանուկեանի դաշնամուրի կատարմամբ:

Պարախմբի անդամներն էին՝ Նարէ Ասատրեանը, Նազէ Ասատրեանը, Վանէ Իսաղուլեանը, Սարինէ Խուդաբախշեանը, Սելինէ Խուդաբախշեանը, Լեոնիկ Ղազարեանը, Մինելի Ղազարեանը, Ելենա Մանուկեանը, Վանէ Մինասեանը, Սելին Մկրտչեանը, Քրիստինէ Յակոբեանը, Սիւնէ Շահիջանեանը եւ Ալինա Տէր Սուքիազեանը:

Ծրագրի աւարտին թեմի կաթողիկոսական փոխանորդ Տ. Սիփան ծ. վրդ. Քէչէճեանը եզրափակիչ խօսքում, նախ շնորհակալական, գնահատանքի եւ քաջալերանքի խօսքեր ուղղեց ձեռնարկը նախա-

ձեռնող, կազմակերպող եւ մանաւանդ իրականացնող պատասխանատուներին, բանախօսին, համոյթի անդամ-ուհիներին եւ բոլոր նրանց, որոնց համագործակցութեամբ իրականացաւ այս շքեղ հանդիսութիւնը, ապա անդրադառնալով օրուայ խորհրդին ասաց. «*Հոկտեմբեր ամսւայ ընթացքում նշւում է Հայ մշակոյթի եւ Ս. թարգմանչաց օրը. տօնը նշելու եւ հայ մշակոյթը ցուցադրելու ամենայարմար վայրը մշակութային կենտրոններն են եւ այսօր «Արարատ» մարզա-մշակութային կենտրոնի այս սրահը վերածւեց մի նոր ցուցահանդէսի, որտեղ փորձեցինք պանծացնել հայ մշակոյթը. մշակոյթ, որ դարձաւ հայ մտքի, սրտի եւ հոգու գերագոյն ուժը եւ «Կենաց ծառ»-ը*». (բացատրելով, որ Աստուածաշնչում պատկերուած ու նկարագրուած, հոգուն անմահութիւն պարգեւող Կենաց ծառը պատկանում է համայն մարդկութեանը, իսկ մեր իրականութեան մէջ երկրորդ կենաց ծառը՝ հայ մշակոյթն է): Հայր Սուրբը մէջբերելով բացման խօսքի այն հատուածը, որտեղ ասւած էր՝ մշակոյթը նման է մի հեղեղի, որ քանի գնում, յորդանում է, ասաց. «*Այս խօսքից երկու բան կարելի է քաղել՝ մէկն այն, որ նախքան այդ «գետի» ովկիանոս հասնելը կամ ցամաքելը, նրանից օգտւել այնքան, որքան կարելի է, իսկ երկրորդը՝ զգոյշ լինել, որ այդ «գետը» երբ հասնի իր աւարտին, այդ ովկիանոսը չդառնայ համաշխարհացումի եւ այլ ազգերի ովկիանոսը, այլ չոգիանայ, անձրեւի եւ հեղեղայ հայրենիքում ու սփիւռքում ապրող մեր ժողովրդի մէջ*»։

Յիշեցնենք, որ հոկտեմբերի 14-ից 16-ը նոյն միութեան Մշակութային միաւորի վարչութեան նախաձեռնութեամբ եւ մասնակցութեամբ Նոր Ջուղայի Հայոց ազգ. դպրոցների եւ միութիւնների տեղի ունեցաւ ձեռարուեստի ցուցահանդէս՝ նւիրուած Հայ մշակոյթի եւ Ս. թարգմանչաց տօներին:

ԱՐՑԱԽԻՆ ՁՕՐԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԴԱՀՏԱՀԱՆԴԷՍ

Նախաձեռնութեամբ Նոր Զուղայի Հայ Կանանց Գթութեան միութեան եւ համագործակցութեամբ Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան ու Հայ Դատի «Արձագանք» քարոզչական յանձնախմբի, հինգշաբթի՝ սեպտեմբերի 29-ի երեկոյեան, «Արարատ» միութեան շրջափակում տեղի ունեցաւ բարեգործական դաշտահանդէս, որի հասոյթն ամբողջութեամբ յատկացուելու է Արցախին եւ արցախահայութեանը զօրակցելու աշխատանքներին:

Միջոցառման ընթացքում «Արձագանք» քարոզչական յանձնախմբի կազմակերպութեամբ իրականացուեց Արցախին անդրադարձող հետաքրքիր ծրագիր, որն սկիզբ առաւ 25-ամեայ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան օրհներգով: Ապա Մանիա Ղուկասեանի միջոցով ընթերցուեցին նիւթեր, որոնցով լուսարձակի տակ առնուեցին Արցախի ազատագրական պայքարը, ապրիլեան քառօրեայ պատերազմը եւ թեմիս կատարած աշխատանքներն արցախահայութեանը զօրակցելու ուղղութեամբ: Իւրաքանչիւր հատուածի ընթերցումից յետոյ ցուցադրւում էին նիւթին համապատասխան տեսանիւթեր:

Յատկանշական է, որ խանդավառ մթնոլորտն ապահովելու համար կազմակերպիչների միջոցով նախատեսուել էին ուրախ երաժշտութիւն, ձեռքի աշխատանքի պատրաստման կրպակ՝ մանուկների համար, վիճակախաղ, անուշաբոյր ուտեստների եւ Արցախից բերուած հայկական աւանդական ուտելիքների ու յուշանուէրների վաճառք, ինչու չէ նաեւ բազմաթիւ այլ խաղեր, որոնցով երեկոն աւելի գրաւիչ ու հաճելի դարձաւ՝ յատկապէս մանուկների ու պատանիների համար:

«ԱՍՈՒՊ» ՆԻԱԳԱԽՄԲԻ ԿԱՏԱՐՄԱՄԲ ՌՈՔ ՈՃԻ ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԵՐԵԿՈՅ ՀԱՅ ՈՒՍ. ՉՀԱՐՄԱՀԱԼ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՅԱՐԿԻ ՆԵՐՔՈՅ

Հայ ուս. Չհարմահալ միութեան Նոր Զուղայի մասնաճիւղի վարչութեան հովանաւորութեամբ, «Ասուպ» նւագախումբը ռոք երաժշտութեան համերգային երեկոյ իրականացրեց ուրբաթ՝ սեպտեմբերի 2-ի երեկոյեան ժամը 8:00-ին, սոյն միութեան կենտրոնատեղիի բացօթեայ տարածքում:

Ձեռնարկը բացուած յայտարարուեց մասնաճիւղի վարչութեան անդամ Նոռա Շահիջանեանի ողջոյնի եւ բացման խօսքով, ով ուրախութեամբ յիշեցնելով այս համերգային երեկոյի եւ Արցախի անկախութեան 25-ամեակի զուգադիպման մասին, շնորհաւորանքի խօսքով հանդէս եկաւ հայ ժողովրդի համար պանծալի յաղթանակի կապակցութեամբ: Տկն. Շահիջանեանն իր խօսքի շարունակութեան մէջ կարեւորութեամբ շեշտեց, որ միութիւնը նման ձեռնարկներ հովանաւորելով, նպատակ ունի երիտասարդներին քաջալերել եւ նրանց՝ իրենց կարողութիւնների ու տաղանդի դրսեւորման առիթ ընձեռել:

Բացման խօսքին յաջորդեցին հայերէն եւ անգլերէն լեզուներով երգերի հրաշագեղ կատարումները, որոնց լայ-

նածաւալ խանդավառութեամբ ու ոգեւորութեամբ ունկնդրեց ռոքի սիրահար հանդիսատեսը:

Խմբի դերակատարներն էին՝ Դրօ Տէր-Մարտիրոսեան՝ վոկալ, Ռաֆֆի Խուդաբախշեան՝ բաս-կիթառ, Ադրիան Դաւթեան՝ հարուածային գործիքներ (դրամզ), Հայկ Խոսրովեան՝ ստեղնաշարային նւագարան, Վահէ Կարապետեան՝ կիթառ: Տղաների հետ սերտ համագործակցութիւն էին ցուցաբերել մեներգչուհիներ՝ Անասիկ Յովսէփեանն ու Վանա Շիրւանեանը, ովքեր ընթացքում հանդէս եկան երգեցողութեամբ:

Երեկոն աւարտուեց համեստ ընդունելութեամբ:

ՀՀ ՎԵՐԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՏՕՆԸ ՆՇՈՒԵՑ ՀԱՅ ՈՒՍ. ՉՀԱՐՄԱՀԱԼ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՁՈՒՂԱՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՅԱՐԿԻ ՆԵՐՔՈՅ

ՀՀ վերանկախացման 25-ամեակի առիթով Հայ ուս. Չհարմահալ միութեան Նոր Ջուղայի մասնաճիւղի յարկի ներքոյ կազմակերպուեց միջոցառում, շորեքշաբթի՝ սեպտեմբերի 21-ի երեկոյեան՝ մասնակցութեամբ միութենականների եւ մի շարք հրաւիրեալների:

Ծրագիրն սկիզբ առաւ ՀՀ օրհներգի յոտնկայս ունկնդրութեամբ, այնուհետեւ մասնաճիւղի վարչութեան անունից ողջոյնի եւ օրուայ խորհրդի առնչութեամբ խօսքերով արտայայտուեց վարչութեան անդամուհի Նորա Շահիջանեանը, ով իր մաղթանքները եզրափակել էր Չարենցի հանրայայտ այս խօսքի մէջբերմամբ. «*Ով հայ ժողովուրդ քո միակ փրկութիւնը, քո հաւաքական ուժի մէջ է*»:

Ապա խօսքը փոխանցուեց երիտասարդ միութենական Կարէն Խանլարեանին՝ օրուայ առթիւ արտայայտուելու:

Ահա մի հատուածի մէջբերում նրա խօսքից.

«*Ինչպէս 25 տարի առաջ, այսօր նոյնպէս հայ ժողովուրդը որեւէ կասկած չունի, որ 1991 թւականի սեպտեմբերի 21-ին, անկախութեան հանրաքւէի ժամանակ ճիշտ քայլ կատարեց՝ այո ասելով խորհրդային միութեան կազմից դուրս գալուն եւ անկախութեան վերականգնմանը: Ճիշտ է անկախութեան առաջին տարիներն իսկապէս շատ դժւար էին, բայց այդ բոլոր դժւարութիւններով հանդերձ, մանուկ անկախութիւնն այսօր 25 տարեկան է, քանի որ հայ ժողովուրդն իր հայ-*

րենիքեան եւ սփիւռքեան թեւերով միահամուռ կերպով լծուեց անկախութեան ամրապնդման եւ հայոց պետականութեան հզօրացման գործին»։

Ծրագրի շարունակութեան մէջ գեղարուեստական կատարումներով տօնն առաւել խանդավառ դարձաւ: Միութեան «Մեղեդի» մանկական երգչախումբը մեներգչուհի եւ երգ-երաժշտութեան ուսուցչուհի Արսինէ Մարգարեանի ղեկավարութեամբ, եւ մայեստրո Համիկ Ալեքսանդրանի երգեհոնի նուագակցութեամբ, խմբական երգերից կազմուած մի փունջ նուիրեց բոլորին, իսկ Վեհանուշ խուդաբախշեանը հանդէս եկաւ ասմունքով:

Երեկոյի եզրափակիչ խօսքն ասաց արժ. Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալստանեանը, ով իր խօսքում շեշտեց. «*Հայ ժողովուրդը լինելով ազատատենչ ազգ՝ ձգտեց այնպիսի անկախութեան, որի իրականացումը կատարուեց* 1918 *թուականին։ Անգամ մարդը եթէ անկախ չէ եւ կախուած է որեւէ այլ անհատից, չի կարող լիարժէք կեանք ունենալ, ուր մնաց մի ազգ, որն ունի հարուստ պատմութիւն։ Այս անկախութիւնը մեզ համար մեծ արժէք ունի*»։

Արժ. Քահանայ հայրն իր խօսքի մի այլ բաժնում անդրադառնալով հայրենիքում առկայ տնտեսական դժուարութիւններին եւ ժողովրդի արտագաղթին յոյս յայտնեց, որ երկրի պետական այրերն առաւել ջանք կը գործադրեն այդ խնդիրների փարատման ուղղութեամբ: Նա աւարտին աղօթեց բարձեալ Աստծուն՝ անկախ հայրենիքն առաւել հզօրացնելու եւ հայրենիքի բեկորները մայր հողին վերամիաւորելու համար:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՄՈՒՏԸ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

2016 թւականի սեպտեմբերի 24-ի առաւօտեան ժամը 8:00–ին, Շահինշահրի Հայոց ազգային «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների աշակերտութիւնը դիմաւորեց ուսումնական նոր տարեշրջանը՝ արժ. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի, Շահինշահրի Հայ համայնքի վարչութեան, շրջանի Կրթադաստիարակչութեան հիմնարկի պատւիրակութեան, զոյգ դպրոցի անձնակազմերի եւ ծնողների ներկայութեամբ:

Ծրագրի սկզբում ողջոյնի խօսքով եւ տարեմուտի կապակցութեամբ շնորհաւորանքներով ելոյթ ունեցաւ ուսումնարանի տեսուչ պրն. Ղոջավանդը, ով շնորհակալութիւն յայտնելով շրջանի Կրթադաստիարակչութեանը, ինչպէս նաեւ ազգային մարմիններին՝ իրենց ցուցաբերած անվերապահ հովանաւորութեան համար՝ յոյս յայտնեց սոյն տարեշրջանը յաջողութիւններով լի տարի հանդիսանայ բոլորի համար:

Այնուհետեւ արժ. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի գլխաւորութեամբ տարեշրջանի առաջին միասնական «Տէրունական» աղօթքը հնչեց աշակերտների շուրթերից, որին յաջորդեց Քահանայ Հօր օրհնանքը:

Ողջոյնի խօսքով ելոյթ ունեցաւ Կրթադաստիարակչութեան հիմնարկի ներկայացուցիչը, ով եւս իր հերթին մաղթելով աշխարհի բոլոր մանուկներին անհոգ մանկութիւն եւ աշակերտներին խաղաղ ու յաջողութիւններով լի ուսումնական տարեշրջան՝ անդրադարձ ունեցաւ «Սրբազան Պաշտպանութեան Շաբաթաւն»՝ բարձր գնահատելով հայրենի հողն ու պատիւը իրենց կեանքի գնով պաշտպանած սուրբ նահատակներին:

Նոյն օրը առաւօտեան ժամը 11:00-ին, դպրոցական վերամուտի առիթով Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի եւ Կրթական խորհրդի ներկայացուցիչները համայնքիս Հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարան այցելելուց եւ նշեալ կրթօջախի տարեմուտի առաջին զանգը հնչեցնելուց յետոյ, ներկայացան «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցներում: Կրթական խորհրդի խօսքը համայնքիս Հայոց Ազգային դպրոցներում փոխանցեց սոյն մարմնի ատենապետուհի Սաթենիկ Աւետումեանը, ով ազգային մարմինների անունից շնորհաւորանքի խօսք փոխանցելով շեշտեց՝ դպրոցական տարիները իւրաքանչիւր անհատի կեանքի ամենայիշարժան պահերն են, ուստի յորդորեց աշակերտութեանը բարձր գնահատելով իրենց ընձեռած հնարաւորութիւնները՝ իրենց լաւագոյնը դրսեւորեն սոյն տարիների ընթացքում:

Օրւայ առիթով գեղեցիկ խօսքերով եւ ասմունքներով արտայայտուեցին աշակերտ-ուհիներ Վաչէ եւ Նարէ Քեշիշեանները, Բիւրա Մինասեանը, Դերիկ եւ Վանէ Թահմազեանները, Արւին Մինասքանեանը եւ Թէոդիկ Մանուկեանը:

Վերջում քահանայ հօր ձեռամբ հնչեց ուսումնական տարեշրջանի առաջին զանգը:

Ծրագրի աւարտին կազմակերպւել էր համեստ ընդունելութիւն:

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՕՆԸ ՆՇԻԵՑ ՀԱՀԻՆՀԱՀՐՈՒՄ

Կիրակի՝ թւականիս հոկտեմբերի 9-ի առաւօտեան, Սրբոց թարգմանչաց տօնի առիթով, Շահինշահիր «Սրբոց Վարդանանց» եկեղեցու սրահում մատուցւեց Ս. եւ անմահ Պատարագ՝ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի ձեռամբ, արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանի մասնակցութեամբ եւ դպրաց դասի սպասարկութեամբ:

Օրուայ խորհրդին ներկայ էին Շահինշահիր Հայ համայնքի վարչութիւնը, Հայ կանանց եկեղեցասիրաց միութեան անդամները, «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի, «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» դպրոցների ուսուցչական կազմերն ու աշակերտութիւնը, ծնողները եւ համայնքի անդամները:

Գերպ. Հայր Սուրբն արարողութեան ընթացքում գեղեցկօրէն մեկնաբանելով Աստուածաշնչի «Առակաց» գրքից թարգմանւած առաջին նախադասութիւնը՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ», յորդորեց հայ աշակերտներին բարձր գնահատեն հանճարի խօսքերն եւ ճանաչեն ու իրագործեն Աստուածաշնչի յանձնարարած իմաստութիւնն ու խրատը: Իր բովանդակալից քարոզում Հայր Սուրբը հանգամանօրէն անդրադառնալով հայ ուսուցչի նշանակալից դերին՝ հայ աշակերտի հայեցի դաստիարակութեան եւ նրա հոգին հայավայել զարգացնելու նւիրական գործում՝ շնորհաւորեց Հայ ուսուցչի տօնը եւ ոյժ ու կորով մաղթեց հայ մշակոյթի բոլոր երախտաւորներին:

Հայր Սուրբն իր օրհնանքն ուղղելով բոլոր այն ծնողներին, ովքեր իրենց սիրասուն զաւակներին ուղարկելով հայոց ազգային դպրոցներ, դրսեւորում են իրենց վստահութիւնը հայկական դպրոցի նկատմամբ՝ իր խօսքը եզրափակեց բոլոր ներկաներին ուղղւած իր շնորհաւորանքի խօսքով՝ Հայ մշակոյթի եւ Թարգմանչաց տօների կապակցութեամբ:

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐԸ ՀԱՀԻՆՀԱՀՐԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ «ՆԱՐԵԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ-ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՈՒՄ

Երկուշաբթի՝ 2016 թւականի հոկտեմբերի 10-ի առաւօտեան, «Մանուկների համաշխարհային օր»-ւայ առիթով, Շահինշահիր Հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի տեսչութեան եւ ուսուցչական կազմի նախաձեռնութեամբ՝ զբօսանք էր կազմակերպւել կրթօջախի սաների համար:

Դպրոցի սաներն իրենց պատասխանատուների ուղեկցութեամբ՝ զբօսայգում անցկացրին զւարճալի պահեր:

Օրուայ առիթով կազմակերպւել էին հաճելի խաղեր եւ մրցոյթներ, որոնց մեծ սիրով մասնակցեցին դպրոցի սաները՝ դրսեւորելով իրենց ձիրքն ու մրցունակ լինելը:

ՇՐՋԱԳԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԻՋԵՒԱՆԱՏՈՒՆ «ՔԱՐԻՒՆԱՍԱՐԱՅԷ ԱԲԱՍԻ»

Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի վարչութեան հովանաւորութեամբ եւ Երէցական միաւորի նախաձեռնութեամբ, կազմակերպւել էր շրջագայութիւն դէպի «Քարւանսարայէ Աբասի»:

Երէցական միաւորի ղեկավարութեամբ, երկուշաբթի՝ 2016 թւականի սեպտեմբերի 26-ի յետմիջօրէի ժամը 15:30-ին 51 հոգանոց խումբը ճանապարհւեց դէպի իջեւանատուն, որը գտնւում է Շահինշահրից դէպի հիւսիս՝ 20 կմ. հեռաւորութեան վրայ:

Տեղ հասնելուն պէս, ընտրելով յարմարաւէտ տաղաւարներ, մաքուր օդին հիւրասիրւեցին, ապա սկսեցին ուսումնասիրել շրջապատը, որն ունէր հետաքրքիր կրպակներ, որտեղ վաճառւում էին ձեռարւեստի տարատեսակ նմուշներ:

Յուշանւէրներ գնելուց եւ զբօսնելուց յետոյ, մասնակիցները վերադարձան տաղաւարներ:

Շրջագայողների մի մասը ժամանակն անցկացրեց զրուցելով, միւս մասը մասնակցեց Երէցական միաւորի կողմից կազմակերպած ուրախ խաղերին:

Հետաքրքիր եւ հաճելի օր անցկացնելուց յետոյ, բարձր տրամադրութեամբ, երեկոյեան ժամը 21:00-ին վերադարձան Շահինշահր:

Ն.Զ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻԱՒՈՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆԻ 48-ՐԴ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻՆ

Երկուշաբթի՝ 2016 թւականի սեպտեմբերի 12-ի երեկոյան ժամը 22:00-ին, Շահինշահրի «Սրբոց Վարդանանց» ազգային դպրոցի շրջափակը մարդաշատ էր. այնտեղ էին հաւաքւած Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի Մարզական միաւորի մարզիկները՝ թւով 15 հոգի, եւ Փերիոյ կրթասիրաց միութեան մարզիկները՝ թւով 6 հոգի, իրենց ծնողների եւ հարազատների հետ:

Հաճելի իրարանցում էր, երբ բակ եկաւ Շահինշահրի հոգեւոր տեսուչ՝ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը եւ բոլորն անկաշկանդ ու մտերմօրէն շրջապատեցին Հայր Սուրբին:

Գերպ. Հայր Սուրբը մարզիկներին շնորհաւորեց Իրանի 48-րդ համահայկական խաղերին մասնակցելու համար եւ յորդորեց՝ լինել կարգապահ, ցուցաբերել մարզիկին յարիր կեցւածք, լսել պատասխանատուներին եւ բարձր պահել միութիւնների եւ Շահինշահրի հայ համայնքի պատիւը:

Հաւաքական աղօթքից յետոյ, գերպ. Հայր Սուրբը մարզիկներին նւիրեց օրհնած խաչեր, որը հաճելի անակնկալ էր մարզիկ-մարզուհիներ համար:

Այնուհետեւ գերպ. Հայր Սուրբը ճանապարհի աղօթքով բարի երթ մաղթեց համայնքի զոյգ միութիւնների մարզիկ-ուհիններին եւ պատասխանատուներին:

«Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի վարչութեան նախագահ պրն. Գեւիկ Խաչատրեանը շնորհակալութիւն յայտնեց գերպ. Հայր Սուրբին՝ մաղթանքների համար, եւ կազմակերպած ձեւով, բարձր տրամադրութեամբ, կէսգիշերին մօտ, ժամը 23:00-ին, ճանապարհեցին դէպի Թեհրան, իրենց մասնակցութիւնը բերելու Իրանի 48-րդ համահայկական խաղերին, որտեղ նրանց սպասում էր առողջ մրցակցութիւն, բազմաթիւ հետաքրքիր անակնկալներ եւ հանդիպումներ:

Այս տարի Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղը վերոյիշեալ խաղերին ներկայացաւ լող, ճատրակ եւ սեղանի թենիս մարզաձեւերով: Մասնաճիւղի կողմից Թեհրան մեկնեցին պրն. Գեւիկ Խաչատրեանը՝ ընդհանուր, պրն. Վահէ Թահմազեանը՝ ճատրակի եւ պրն. Արին Աւետեանը՝ սեղանի թենիսի պատասխանատուներ: Միութեան քարտուղար տկն. Աիդա Մուրադեանը նոյնպէս ներկայ գտնուեց մրցութիւններին եւ քաջալերեց մարզիկներին:

Թեհրանից մասնաճիւղի մարզիկները վերադարձան յաղթանակով, իրենց հետ բերելով երկու գաւաթներ: Ճատրակի 12-ից 18 տարիքային խմբերում Արբի Շիրուանեանը, Դերիկ Թահմազեանը, Թէոդիկ Մանուկեանը, Արուին Մինասքանեանը, Արգին Խուդավերդեանը, Վաչէ Քեշիշեանը եւ Արա Դաւութեանը, իսկ 18-ից բարձր տարիքային խմբերում Արայիկ Խուդավերդեանը, Նորվան Թահմազեանը եւ Թէոդիկ Աւանէսեանն ունեցան թիմային յաղթանակներ՝ գրաւելով առաջին հորիզոնականները:

ԳՆԱՀԱՏՄՆՔԻ ԵՐԵԿՈՅ
Ն.Զ. ՀԱՅ Մ.Մ. «ԱՐԱՐԱՏ» ՄԻՈՒԹԵԱՆ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՄԱՍՆԱՃԻՒՂՈՒՄ

Ն.Զ. Հայ Մ.Մ. «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի վարչութիւնը շաբաթ՝ 2016 թւականի հոկտեմբերի 1-ի երեկոյեան ժամը 19:00-ին, կազմակերպել էր գնահատանքի երեկոյ՝ մասնաճիւղի կողմից Թեհրանում կայացած 48-րդ Համահայկական խաղերին մասնակից մարզիկների համար:

Երեկոյին ներկայ էին արժն. Տ. Սահակ քհնյ. Մինասեանը, Համայնքի վարչութեան ներկայացուցիչները, մասնաճիւղի մարզիկ-մարզուհիները եւ նրանց ծնողները:

Հանդիպման սկզբում վարչութեան նախագահ պրն. Գեւիկ Խաչատրեանը ողջունեց ներկաներին եւ համառօտ ներկայացրեց 48-րդ Համահայկական խաղերի ընթացքը, ապա շնորհաւորելով ճատրակի մրցութիւններում ձեռք բերած յաջողութիւների համար, մարզիկներին ցանկացաւ նորանոր մրցանակներ: Նա նշեց. «*Լաւ կը լինի եթէ հետագայում այլ մարզաձեւերում եւս գրանցւեն յաջողութիւններ եւ մրցութիւններին մարզիկ-ուհիները ներկայանան աւելի լաւ մարզավիճակում եւ ցուցադրեն որակեալ խաղ*»:

Շնորհաւորանքի խօսքերով հանդէս եկաւ արժն. Տէր Հայրը, ով գնահատեց «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի վարչութեան կատարած աշխատանքը եւ շնորհաւորելով ձեռք բերուած յաջողութիւնը՝ նշեց. «*Սիրում ենք «Արարատ» միութիւնը եւ մարզանքը: Հաւատում ենք, որ կարող ենք, յոյսով մասնակցում ենք եւ հպարտանում ենք այսօրւայ արդիւնքներով*»:

Այնուհետեւ պրն. Գեւիկը խօսքը փոխանցեց Շահինշահրի Հայ համայնքի վարչութեան նախագահ պրն. Մելքոն Շիրուանեանին, ով կարեւորելով եւ բարձր գնահատելով «Արարատ» միութեան Շահինշահրի մասնաճիւղի վարչութեան եւ միաւորների աշխատանքը՝ ընդգծեց. «*Թւով քիչ ենք, բայց քիչ լինելը չպէտք է պատճառ դառնայ, որ դադարեցնի մշակութային եւ մարզական գործունէութիւնը, եւ «Արարատ» միութեան աշխատանքի ապացոյցը սա է՝ այս գեղեցիկ գաւաթները*»:

Մարզիկներն իրենց տպաւորութիւններով կիսեցին վարչութեան անդամների եւ ներկաների հետ: Հանդիպումն անցաւ ընկերային ջերմ մթնոլորտում:

Վերջում կատարուեց համեստ հիւրասիրութիւն:

ԿԻՐԱԿՆԱՄՈՒՏԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ՀԱՀԻՆՇԱՀՐՈՒՄ՝ ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԲ

Շաբաթ՝ 2016 թ. հոկտեմբերի 22-ի յետկէսօրեայ ժամը 5:00-ին, Շահինշահիր «Սրբոց Վարդանանց» դպրոցի սրահում, համայնքի հաւատացեալ ժողովուրդը մասնակցեց Կիրակնամուտի արարողութեանը՝ դիմաւորելու եւ պատգամը լսելու Սպահանի հայոց թեմի նորանշանակ կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանի:

Գերպ. Հայր Սուրբին ուղեկցել էին Թեմիս Կրօնական եւ Թեմական խորհուրդների ատենապետերը:

Օրուայ ժամերգութեանը ներկայ էին համայնքիս հոգեւոր տեսուչ Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը, Տ. Սահակ քհնյ. Մինասեանը, դպրաց դասը, Շահինշահիր Հայ համայնքի վարչութիւնը, ուսուցչական կազմերի, ծնողական խորհուրդների, միութիւնների ներկայացուցիչները եւ անդամները:

Կիրակնամուտի արարողութիւնից յետոյ, Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանը գեղեցկօրէն ներկայացնելով նորանշանակ Հայր Սուրբին՝ խօսքը փոխանցեց նրան, ով իր ողջոյնի խօսքն ուղղելով բոլոր ներկաներին՝ իր խորին գոհունակութիւնը յայտնեց այս հանդիպման կապակցութեամբ: Իր խօսքում գերպ. Հայր Սուրբն արտայայտեց իր վառ տպաւորութիւնը Շահինշահիր քաղաքը եւ ապա համայնքի անդամներին առաջին անգամ այցելելու մասին: Նա բարձր գնահատելով թեմիս ազգայինների եւ պատասխանատուների նուիրուած գործունէութիւնը, յոյս յայտնեց, որ այսուհետ եւս, ինչպէս միշտ Թեմն իր բոլոր կառոյցներով եւ ենթամարմիններով քայլելու է դէպի բարգաւաճում ու զարգացում:

Գերպ. Հայր Սուրբն իր դրուատանքի խօսքն ուղղեց բոլոր ներկաներին եւ մասնաւորաբար դպրաց դասին ու «Նարեկ» երգչախմբին, որոնց գեղգեղուն շարականների ներքոյ բարձրանում է հաւատացեալների խունկն ու աղօթքը՝ առ Աստուած:

Հայր Սուրբն իր սրտի խօսքը եզրափակեց՝ աղօթելով ու օրհնելով համայնքի անդամներին յոյս յայտնելով, որ անտարակոյս պէտք է կազմակերպւեն յաճախակի հանդիպումներ համայնքիս վարչական պատասխանատուների եւ անդամների հետ:

Օրուայ առիթով պատշաճ հիւրասիրութիւն էր կազմակերպւել Շահինշահիրի Հայ համայնքի վարչութեան նախաձեռնութեամբ եւ Հայ կանանց եկեղեցասիրաց միութեան համագործակցութեամբ, որի ընթացքում առիթ ընձեռւեց համայնքի բոլոր անդամներին ողջունել եւ բարի գալուստ մաղթել գերպ. Հայր Սուրբին:

ՍՊԱՀԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ ԳԵՐՊ. Տ. ՍԻՓԱՆ Ծ. ՎՐԴ. ՔԷՉԷՃԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՇԱՀԻՆՇԱՀՐԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Երեքշաբթի՝ 2016 թ. հոկ. 25-ի առաւօտեան ժամը 10:00-ին, Սպահանի հայոց թեմի Կաթողիկոսական փոխանորդ գերպ. Տ. Սիփան Ծ. վրդ. Քէչէճեանը իր անդրանիկ այցելութիւնը կատարեց Շահինշահիրի հայոց ազգային դպրոցներ՝ ուղեկցութեամբ Շահինշահիրի հոգեւոր տեսուչ գերպ. Տ. Անանիա Ծ. վրդ. Գուճանեանի, Թեմիս Թեմական եւ Կրթական խորհուրդների ներկայացուցիչների:

Այցելու պատուիրակութիւնը նախ այցելեց Շահինշահիրի հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանը, որտեղ նրան դիմաւորեցին համայնքիս Վարչութիւնը, դպրոցի տեսչութիւնը, ուսուցչական կազմն ու ծնողական խորհուրդը: Կրթօջախի սաներն եւս հանդէս եկան իրենց գեղեցիկ մանկական ասմունքներով ու երգերով, որոնք ներկաների կողմից արժանացան բարձր գնահատանքի:

Այնուհետեւ գերպ. Հայր Սուրբն իրեն ուղեկցող անձնակազմի հետ այցելեց համայնքի «Սրբոց Վարդանանց» եւ «Մասիս» տարրական եւ միջնակարգ դպրոցները, որտեղ եւս դպրոցի անձնակազմն ու աշակերտութիւնը սիրալիր դիմաւորեցին նրանց:

Գերպ. Հայր Սուրբն իր ոգեշունչ պատգամն ուղղե-

լով աշակերտութեանը՝ յորդորեց նրանց միշտ քաջ գիտակցելով իրենց սրբազան պարտականութիւնը հայեցի եւ քրիստոնէավայել դաստիարակելու ուղղութեամբ, բարձր պահեն գիտութեան եւ լուսաւորութեան ջահը եւ հաստատակամ քայլեն դէպի վառ ու լուսաւոր ապագայ: Նա բարձր գնահատեց նաեւ դպրոցի պատասխանատուների վեհ առաքելութիւնը, որոնք որեւէ ճիգ ու ջանք չեն խնայում հայոց ազգային դպրոցները շէն ու կանգուն պահելու նուիրական գործում:

Ապա գերպ. Հայր Սուրբը ցանկութիւն յայտնեց դասարան առ դասարան հանդիպելու աշակերտներին՝ աւելի մօտիկից ծանօթանալու կրթական միջավայրին:

Ստեղծուած այս ջերմ մթնոլորտում դպրոցի աշակերտները գեղեցիկ արտայայտութիւններով եւ ասմունքներով ներկայացան՝ արժանանալով ներկաների խրախուսանքներին:

Օրուայ առիթով համեստ հիւրասիրութիւն էր կազմակերպուել համայնքիս հայոց ազգային դպրոցներում Ծնողական խորհուրդների նախաձեռնութեամբ:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՀԱՀԻՆՀԱՀՐԻ «ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ» ԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Կիրակի՝ 2016 թւականի հոկտեմբերի 30-ի առաւօտեան ժամը 10:30-ին, Ծահինշահրի Հայոց ազգային «Նարեկ» մանկապարտէզ-նախակրթարանի սաները դպրոցի տեսչութեան, ուսուցչական կազմի եւ Ծնողական խորհրդի ուղեկցութեամբ այցելեցին «Սրբոց Վարդանանց» դպրոցի գրադարանը:

Դպրոցի գրադարանում նրանց ողջունեցին հայերէն բաժնի փոխտեսուչ Արիս Դաւութեանը եւ գրադարանավարուհի Անահիտ Այւազեանը: Բարիգալստեան խօսքից յետոյ, գրադարանավարուհին մատչելի լեզուով սաներին ներկայացրեց գրքերի կախարդական աշխարհը՝ ներկայացնելով նրանց մի քանի մանկական հետաքրքիր գրքեր, արձակ եւ չափածոյ ժողովածուներ:

Մանուկները մօտիկից ծանօթացան գեղեցիկ պատկերազարդ մանկական գրքերի հետ: Այնուհետեւ գրադարանավարուհին մի գեղեցիկ հեքիաթ պատմեց մանուկների համար եւ այսպիսով սաները հաճելի պահեր վայելեցին գրադարանում:

ՆԻՒԹԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն.Ջ. Հայոց Առաքելական Եկեղեցեայ Վարչութիւն

Տօն Վերափոխումն Ս. Աստուածածնի

- 1,000,000-ական ռիալ. Յարութիւն Յակոբեան, Մառիեթ Խոջեմալ
- 600,000 ռիալ. Մառիթա Յակոբեան
- 500,000-ական ռիալ. Իւեթ Շիրուանեան, Երուանդ Աբրահամեան, Լիդա Թահմազեան, Իւան Նովշադեան, Մոսիկ Խաչիկեան, Աւետումեան եւ Խաչատրեան եւ Յարութիւնեան, Վարուժ եւ Ստելա Վարդանեաններ, Տիգրանուհի Ղեւեան, Բագրատ Սիմոնեան, Վարդուշ Յովսէփեան, Սաքօ Յակոբեան՝ Թագուշ Տէր-Սարգսեանի յիշատակին, ոմն
- 400,000-ական ռիալ. Մանուշ Պօղոսեան, Վարդուշ Սարուխանեան՝ Գալստան Սարուխանեանի յիշատակին
- 300,000-ական ռիալ. Դանիէլ Հայրապետեան, Սոնիա Միրզաբեգեան, Լուսիկ Ասատրեան, Պայծառ Սիմոնեան
- 200,000-ական ռիալ. Հրաչիկ Ղարիբեան, Վազրիկ եւ Քառոլին Վարդանեաններ, Սանդրա Խաչատրեան, Իշխան Թահմազեան, Ռիմա Դիլանչեան, Արշալոյս Թահմազեան, Ռիմա Թորոսեան, Վաչէ Շահիջանեան, Ժանեթ Աղախանեան, Նարեկ Յովսէփեան, Ովսան Այւազեան, Նազելի եւ Նարեկ Փանոսեաններ, Մարջան Մինասեան, Նայիրի Շահիջանեան, Սիրվարդ Թորոսեան, Մարիամ Մինասեան, Ալվարդ Զարգարեան, Թադէ եւ Թոմիկ Նահապետեաններ, Մարօ Ծատուրեան, ոմն՝ Ազնիւ Աբրահամեանի եւ Շուշան Մարգարեանի յիշատակին, ոմն
- 150,000-ական ռիալ. Միրօ եւ Մխիթար Խուդավերդեաններ, Մելքոն Ղարիբեան, Յովսէփ եւ Խաթունիկ Մելիքեաններ, Արուսեակ Պօղոսեան, Անի Թորոսեան, Հայկազ Պետրոսեան
- 100,000-ական ռիալ. Բալիկ Մարտիրոսեան, Սօսէ եւ Սիւնէ եւ Սարիկ Ղարիբեաններ, Արթուր եւ Միգանուշ Սարգսեաններ, Բաֆֆի Մինասքանեան, Վազգէն Խուդավերդեան, Խաթուն Խաչիկեան, Ղազար եւ Արաքս Թահմազեաններ, Երուանդ Խաչիկեան, Շաւարշխան Ունջուլեան, Սոնիկ Նահապետեան, Անգին Հայրապետեան, Էլօ Հայրապետեան
- 80,000 ռիալ. Յովհաննէս Քեշիշեան
- 50,000-ական ռիալ. Հռիփսիկ Թորոսեան, Հրանուշ Դաւթեան, Արմինէ Թահմազեան, Մասիս Յովսէփեան, Ժուանիթա Դաւթեան

Ս. Գէորգ եկեղեցու անուանակոչութեան տօն
Մատաղացու գառների նուիրատուներ

- Էդուին Բաղրամեան, Յարութ Յակոբեան, Յարութ եւ Ժանեթ Ղուկասեաններ, Վրէժ Մինասեան, Մանուէլ Սիմոնեան, Նարեկ Թորոսեան, Էլիա Յակոբեան, Լեւիկ Թորոսեան, Արմինէ Տէր Յովհաննիսեան, Մասիս եւ Լուիզ Յովհաննիսեաններ՝ իրենց զաւակի՝ Արգամ Յովհաննիսեանի զինուորական ծառայութեան աւարտման առթիւ
- 3,000,000 ռիալ. Արփա Ամիրխանեան
- 2,000,000-ական ռիալ. Գառնիկ եւ Հրանուշ Զարգարեաններ, Նուարդ Ծառուկեան, Նորիկ եւ Սոնա Յարութիւնեաններ, Արբի եւ Թալին Թորոսեաններ
- 1,000,000-ական ռիալ. Գագիկ եւ Գիւլնազ Հայրապետեաններ, Արաքս Բարսեղեան, Անդրանիկ եւ Անահիտ Յարութիւնեաններ, Եղիա Ծառուկեան, Գայիանէ Գէորգեան, Վազրիկ եւ Անուշ Մարկոսեաններ, Ամասիա Յակոբեան, Ժուլիեթա Նահապետեան, Գէորգ Յովսէփեան, Մելքոմ Շիրուանեան, Էլին Աբրահամեան, Վահիկ եւ Ժենիկ Թորոսեաններ, Վարդան եւ Կարինէ Մկրտչեաններ, Էմանուէլ Յարութիւնեան, ոմն՝ Հայրիկ եւ Նունիա եւ Օնիկ եւ Լինա Այւազեանների յիշատակին, ոմն
- 600,000 ռիալ. Մեղմիկ եւ Համիկ եւ Թանգիկ Միրզախանեաններ
- 500,000-ական ռիալ. Մեսրոպ Աւ. քհնյ. Գալստանեան, Անդրէ Կարապետեան, Սինթիա Պօղոսեան, Արսէն եւ Վանուհի Ղազարեաններ, Գեւիկ Ասատրեան, Արին Յովհաննիսեան, Արաբօ Պօղոսեան, Սոնիկ Սոհրայեան, Բագրատ Սիմոնեան, Սաշա Մելքոնեան, Ռեբեքա Կարապետեան, Դաւթեան ընտանիք՝ Յարութիւն եւ Աննիկ Դաւթեանների յիշատակին, Սերոբ Առաքելեան, Ժանեթ Պօղոսեան, Մանուշ Պօղոսեան, Ծաղկուշ Յովսէփեան, Հրաչիկ Եոնոքեան, Սիրանուշ Յովսէփեան, Մհեր եւ Վեհանուշ Խուդաբախշեաններ, Սարգսեաններ, Անահիտ Փիլոսեան, Մելանիա եւ Էլինա եւ Քեւին Օհանեաններ, Թենի եւ Թոմիկ Բաղրամեաններ, Աբգարեան ընտանիք, Արա Թորոսեան, Զանի Մարկոսեան, Տիգրանուհի Մանսուրեան, Մուշեղ Այւազեան, Ասպետ եւ Լորեթա Վարդանեաններ, Մառիեթ Խոջեմալ, Ռոնէլ Քոնարաքի, Արուսեակ Քեշիշեան, Մելքոն եւ Զեփիւռ Մարտիրոսեաններ, Արաբօ Յովսէփեան, Նարէ Շահիջանեան, Մանէ Բարսեղեան, Ժուանիթա Դաւթեան, Վահագն Մինասեան, Դալարէ եւ Բարելի Այւազբալեաններ, Նարբէյ Փանոսեան, Արմենուհի Բարֆեան, Ալբերթ Թահմազեան, Սերժիկ Պարսամեան, Զաւէն Մուրադեան, Սուրէն Սէթաղայեան, Յոլակ եւ Արաքս, Ռազմիկ Յովսէփեան, Հերոս Տէր-Մարտիրոսեան, Հայկազ եւ Ծաղկուշ Դաւթեաններ, Սոֆիկ Սամսոնեան, Պօղոս Թահմազեան, Իւեթ Շիրուանեան, Վարուժ Մովսիսեան, Սերժիկ եւ Ալենուշ Ասատրեաններ, Նիքփուռ, ոմն՝ Ամովսիա Խուդաբախշեանի յիշատակին, ոմն (4 պարագայ)
- 450,000 ռիալ. Արաքս Առաքելեան
- 400,000 ռիալ. Այրինէ եւ Արին Մելքոնեաններ
- 300,000-ական ռիալ. Բարսեղ Յովսէփեան, Թալին Կարապետեան, Սերոժ եւ Անահիտ Շահիջանեաններ, Ղուկաս Գրիգորեան, Վեդի Օրոջեան, Ալենուշ Սիմոնեան, Գեւիկ Խաչատրեան, Հերմինէ Թահմազեան, Մայա Նահապետեան, Ռադիկ Նահապետեան, Ռաֆիկ Թորոսեան, Անի Բաբումեան, Գամեր Դիլանչեան, Նարէ Դիլանչեան, Գալիա Դիլանչեան, Գառնի Դիլանչեան, Երուանդ Յովսէփեան, Քարմէն Եարիջանեան, Գառնիկ Բաղդասարեան
- 250,000-ական ռիալ. Վարուժ եւ Հրաչիկ Ղազարեաններ, Ալեքս եւ Անէթ եւ Լիլիան եւ Էդուին եւ Արմինէ Շահմիրզայեաններ
- 200,000-ական ռիալ. Լուդիկ Յովսէփեան, Արամ Բաբումեան, Շաքէ Բաբումեան, Նարինէ Բաբումեան, Նայիրի Թումաթարեան, Վարդուշ Սարուխանեան, Սոնիկ Կիրակոսեան, Արմոնդ Մարգարեան, Հայկազ Պետրոսեան, Մարիամ Մինասեան, Սարօ Ծատուրեան, Ժանեթ Աղախանեան, Հայբերդ եւ Սելին Ղարիբեաններ, Սոնիկ Յակոբեան, Վրէժուհի Դիլանչեան, Իւղաբեր Մանուկեան, Էջմին Խաշաքի, Բալասան Դիլանչեան, Մելինէ Հայրապետեան, Նարեկ Մարկոսեան, Անուշ Ղարախանեան, Թէոդիկ Շահիջանեան, Քարլօ Քամարզարեան, Կարապետեան ընտանիք, Պայծառ Սիմոնեան, Հրաչ Թորոսեան, Վանէ Յովսէփեան, Հերմինէ Վարդանեան, Նոէլ Պարսամեան, Անդրէ Քեշիշեան, Մատթէոս Շահբազեան, Անէթ Նաւասարդեան, Քարմէն Պարսամեան, Մարտիրոս եւ Վայլեթ Ղիասեաններ, Արմէն Շահբազեան, Մարգարիտ Ալեքսանդրեան, Նարինջ Դաւթեան, Նազելի եւ Նարէ Մարկոսեաններ, Նայիրի Շահիջանեան, Սիլվարդ Աղախանեան, Սերինէ Յակոբեան, Վարդան եւ Ռիթա Մկրտչեաններ, Ռազմիկ Վարդանեան, Էմէլի Աբրահամեան, Թալին Խաչատրեան, Վարդանուշ Յովսէփեան, Անգելինա Փանոսեան, Լալա Բաղդասարեան, Արաքս Միրզայեան, Նորիկ Վարդանեան, Աստղիկ Մարկոսեան, Մհեր եւ Հելէնա Խանլարեաններ, Ծաղկուշ Տէրտէրեան, Օֆիկ Սիմոնեան, Նարեկ եւ Նինել Օրոջեաններ, Յասմիկ Հազարմալեան, Յարութ եւ Օֆիկ Ղազարեաններ, Սէյեդ Մոստաֆա Ղալէյի, ոմն՝ Մինաս Տէր-Յովհաննիսեանի յիշատակին, ոմն
- 150,000-ական ռիալ. Համաս Մարգարեան, Արեգնազ Տէր-Յովհաննիսեան, Էդուարդ Բաբումեան, Մանուկ Մանուկեան, Աբգար Ղազարեան, Արուսեակ Պօղոսեան, Սեդա Այւազեան, Եսայի եւ Սերժիկ Վարդանեանների յիշատակին
- 100,000-ական ռիալ. Արթուր եւ Միգանուշ Սարգսեաններ,

Անի Սարգսեան եւ Ռաֆֆի Մինասքանեան, Մառիթա Սարուխանեան, Արա Յարութիւնեան, Արփա Մարգարեան, Գէորգ եւ Սարգիս, Գառնիկ եւ Ժանեթ Օրոջեաններ, Հրաչիկ Յովսէփեան, Լիդա Ծառուկեան, Մարօ Թորոսեան, Սոնա Սուքիազեան, Մագի Տէր-Մարտիրոսեան, Արշալոյս Սահակեան, Վազգէն եւ Վանուհի Խուդավերդեաններ, Օրբել Տէր-Եղիշեան, Բագրատ Բարղեան, Շողիկ Քեշիշեան, Գալստան Պարսամեան, Թամար Գրիգորեան, Բալիկ Մարտիրոսեան, Միրօ Խուդավերդեան, Պօղոս Յովսէփեան, Խաթուն Խաչիկեան, Լորիկ Բաղդասարեան, ոմն՝ Անդրանիկ Յովսէփեանի յիշատակին, ոմն

- 50,000-ական ռիալ. Երուանդ Խաչիկեան, Բիւրեղ Տէր-Յովհաննիսեան, Երան Շահբազեան, Արէն Մարգարեան, Արաքս եւ Լուսիկ Յովսէփեաններ, Սեդա Քեշիշեան

Հանգուցեալ Աւետիս (Աւօ) Բաշիկեանի յիշատակին

- 4,000,000 ռիալ. Ռոզի եւ Մանուշ Ալեքսեաններ
- 1,000,000-ական ռիալ. Ժանօ եւ Սիլա Ալեքսեաններ, Դիանա Ղազարեան-Խաչիկեան
- 500,000-ական ռիալ. Արտիկ եւ Ռոզի եւ Մելքոմ Մելքոմեաններ, Մարիկ Մինասեան, Քնարիկ Բաղդանեան
- 300,000-ական ռիալ. Վարդան քինյ. Աղաբաբայեան, Անուշիկ Յովհաննիսեան, Ռաբերթ Ակոն
- 200,000-ական ռիալ. Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցու Կանանց հոգեւոր լսարան եւ «Շուշանիկ» երգչախումբ, Աւուկ եւ Սանդրա Խուդաբախշեաններ, Գրիշ եւ Ֆլոր Թորոսեաններ
- 100,000 ռիալ. Մերի Մինասքանեան

Հանգուցեալ Ծաղկուշ Յարութիւնեան-Ղարախանեանի յիշատակին

- 500,000-ական ռիալ. Արա եւ Հռիփսիկ Սիմոնեաններ, Աղաշիր Դաւթեան, Հիմենզ Դաւթեան, Փաթրիկ Սահակեան
- 200,000-ական ռիալ. Յաւերժիկ Կարապետեան, Զորիկ եւ Անահիտ Յովսէփեաններ, Առիւծ եւ Թագուշ Խաչատրեաններ
- 100,000 ռիալ. Նինա Խաչատրեան

Հանգուցեալ Հռիփսիկ Սիմոնեանի յիշատակին

- 500,000 ռիալ. Մարտիրոս Սիմոնեան
- 250,000-ական ռիալ. Բեհնուշ Սալիմի, Անուշէ Սալիմի

Ն.Զ. Հայոց ազգ. գերեզմանատան բարեկարդ. մարմին

- 2,000,000 ռիալ. Ֆիլիփ Ուէլթի
- 500,000-ական ռիալ. Սաքօ Յակոբեան, Վահիկ Թահմազեան, Զարեհ Փանոսեան
- 200,000 ռիալ. Սոնիկ Կիրակոսեան
- 100,000-ական ռիալ. Աշխէն Մկրտչեան, Մառիեթ Քամարզարեան

Ն.Զ. Հայոց ազգային «Արմէն» կրթահամալիր

- 15,000,000 ռիալ. Լեոնթին Աբրահամեան
- 5,000,000 ռիալ. Յասիկ Յովհաննիսեան
- 3,100,000 ռիալ. 6-Ա դասարանի աշակերտներ
- 1,400,000 ռիալ. 6-Բ դասարանի աշակերտներ
- 1,125,000 ռիալ. 3-րդ դասարանի աշակերտներ
- 1,000,000 ռիալ. Այլին Ղազարեան
- 670,000 ռիալ. Արփին Դիլանչեան
- 620,000 ռիալ. Արէն Մարգարեան
- 500,000-ական ռիալ. Սելին Բաղրամեան, Միրօ եւ Թադէ Խուդավերդեաններ, Անդրու Վարդումեան
- 400,000-ական ռիալ. Արգին Մկրտչեան, Արգին Մանուկեան
- 370,000 ռիալ. Անի Ղազարեան
- 340,000 ռիալ. Վանէ Յովսէփեան
- 235,000 ռիալ. Անի Մինասեան
- 220,000 ռիալ. Լիլիան Քեշիշեան
- 160,000 ռիալ. Էրին Յովսէփեան
- 150,000 ռիալ. Ադրիանա եւ Դերենիկ Գրիգորեաններ
- 100,000 ռիալ. Մինելիա Մարկոսեան
- 100,000 ռիալ. Էմին Թահմասեան

6-րդի աւարտական հանդէսի առթիւ

- 1,500,000 ռիալ. Մեղրի Փանոսեան
- 1,200,000 ռիալ. Լէօ Շահիջանեան
- 1,000,000-ական ռիալ. Արէն Բարսեղեան, Սիսիան Քալանթար-Օհանեան, Մորենա Դաւթեան, Արէն Մարգարեան
- 750,000 ռիալ. Հայուհի Ղարախանեան
- 500,000-ական ռիալ. «Քանանեան» դպրոցի տեսչութիւն, ուսուցչական կազմ եւ Ծնողական խորհուրդ, Փաթրիկ Ակոն, Ադրիան Մինաս-Խաչիկեան, Դուին Յովհաննիսեան, Արփինէ Մովսիսեան, Յասմիկ Տէր-Մարտիրոսեան, Արթուր Քամարզարեան, Արին Քեշիշեան, Լիանա Ղազարեան, Ադրիան Մկրտչեան, Էմանուէլ Ասատրեան, Քրիստին Թորոսեան
- 200,000-ական ռիալ. Լիլիթա Յովսէփեան, Ալէն Ղեւոնդեան

Հայ ուս. Ջհարմահալ Միութեան Ն.Զ. Մասնաճիւղ

- 2,000,000 ռիալ. ոմն
- 300,000 ռիալ. ոմն

«Ասուպ» նուագախմբի համերգի առթիւ

- 1,000,000 ռիալ. Շահինշահրի Հայ համայնքի վարչութիւն
- 500,000-ական ռիալ. Փերիոյ կրթասիրաց միութիւն, Ն.Զ. Հայ կանանց գթութեան միութիւն, Ն.Զ. Հայուհեաց բարեգործական ընկերութիւն, Վահէ Կարապետեան, Ադրիան Դաւթեան
- 300,000-ական ռիալ. Շահինշահրի Հայ կանանց եկեղեցասիրաց միութիւն, Պարգեւ Բաբումեան
- 250,000-ական ռիալ. Ժան Արթունեան, Ռենէ Ծատրեան
- 200,000 ռիալ. Դրօ Տէր-Մարտիրոսեան

Հ.Հ.-ի անկախութեան 25-ամեակին նուիրուած միջոցառում

- 500,000-ական ռիալ. Սոնիա Միրզաբէգեան, Վրդանէս եւ Ռիթա Մկրտչեաններ, Վաչէ եւ Նոռա Շահիջանեաններ
- 250,000 ռիալ. Սեւակ եւ Արմինէ Խաչատրեաններ
- 200,000-ական ռիալ. Ծաղիկ Եադգարեան, Սոնիա Մկրտչեան, Աննիկ Ալեքսանդրեան
- 120,000 ռիալ. Համասփիւռ Մարգարեան

Առաջնորդարանին եւ ազգային կառոյցին առընչուող լուրերն ու թղթակցութիւնները պատրաստում է Ազգային Առաջնորդարանի Հանրային Կապի գրասենեակը, համայնքային եւ կրօնական արարողութիւններինը՝ «Այիք»-ի թղթակիցները, «Արարատ» Միութեանը՝ Երանուշ Թահմազեանը, Շահինշահրի հայ համայնքինը եւ տեղի «Արարատ» Միութեան մասնաճիւղինը՝ Վիոլետ Յարութիւնեանը եւ Աիդա Մուրադեանը։

Որոշ լուսանկարներ տրամադրում է Գեւիկ Խաչատրեանը։

ՄԵԾ ՀԱՅԱՅԻՆ

خلیفه گری ارامنه اصفهان و جنوب ایران

صندوق پستی ۸۱۷۳۵/۱۱۵

Armenian Cathedral - P.O.Box 81735-115
New - Julfa, Isfahan, Iran
WWW.Norjugha.ir
WWW.Vank.ir
E-mail: Sourbv@Yahoo.com
Tel: +98–31–36243471-2
Fax: +98–31–36270999